

641

μ - 67

9644

Aug. 11
1991

2011

2002

№ 6523

ԽՈՀԱՐԱՐՈՒՀԻ

Տրու

ԿԵՐԱԿՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԵԹՆԵՐԿ

Դազմեց թ. Ա.



ՏՓԻՒՄ

Տպարան Մ. Շաբաթէի և Ընկ. սհկ. 21

1897

ՀԱՅՈՒԹ

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

Ա. Աշխատութիւնները.

Աղօթատետր. բ. տպ. 1889	— 10
Կրօնի գասազիրք ա. ա. 1889 (սպառուած.) .	— 15
,, բ. ա. Դ. տպ. 1891	— 25
,, գ. ա. Գ. „ 1890.	— 25
Տոմար եւ տօնացյաց Հայաստ. ա. եկ. բ. տպ. 1894 —	50
Կարնոյ գաղթը. պատմ. տեսութիւն, 1891 .	— 10
Դիւան Հայոց պատմ. գիրք Ա. Բ. 1780—1834	
Սահ.-Մեսրոպ. Մրցանկին արժանաց. 1893	2 —
Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Սիմեոն կալթողիկոսի յիշատակի կենսագրութեամբ, յաւելլուածներով ու ծանօթ. Սահակ-Մեսրովկ. մրցանակին արժանացած. 1894 .	7 —
Կարգ Աստուածակ. Հայաստան. ա. եկեղեցւոյ բ. տպագր. 1895.	— 40

Բ. Թարգմանութիւնները.

Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է. Գ. Հոփ. 1877	— 40
Խաւարից գեղի լոյս. Գ. Հոփմանի. 1877. .	— 40
Գոն Քիչոտ լամանշեցի Մ. Աւրիան. 1878 (սպառ.)	70
Գեղորդ Ուոլեստոն, Վեպ 1879 (սպառուած). — 60	
Երբորդ ոսկի, առակ Լակիդեի բ. տպ. 1893 .	— 10
Ռոբինզոն (Հրատ. Թիֆլիզի տպագր. ընկ.) 1881 — 60	
Չեստերտոնի ժառանգը. պատկ. 1882	1 —
Ակտէա, ա. Սիսօնվայի 1885	— 50
Եան Երնատ Սմօլեար. Կ. Եանչուկի 1885 . . .	— 20

630
43-Պ

641
Խ-67 սր

ԽՈՀԱՐԵՐՈՒՀԻ

ԿԵՐԱԿՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԶԵՇՆԱՐԿ

35
00
60
00
1-

Կազմից թ. Ա.



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձեի, Կիկ 21

1897

17295

060

9-CH

ԱՅՍԻՎԱՐ

ՊՐԵՄԻԱ ԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՐ

Дозволено цензурою, Тифлисъ, 19-го Июля
1897 г.

Ա. ՄԱՍԻ

Ա Ա Խ Ա Վ Ա Հ

ՈՒՏԻՍՈՒԵՑ ԵՒ ՊԵՍՈՒԵՑ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

(4 մարդու բաժին):

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ընտրելիս անհրաժեշտ է ուշագրութիւն դարձնել, որ նոքա խառնուելով չվնասեն առողջութեան, միաժամանակ չտալ հում կաթը, սունկ և թթուաջուր: Օրինակ, եթէ պատրաստուած է թան կամ ակրօշկա, այդ միենոյն ճաշին չի կարելի տալ սունկ, թթուաջուր, հում միզգ կամ պտուղ կաթի հետ, որովհետև այդ տեսակ խառնուրդից չեշտ կարելի է հիւանդանալ:

1. ԹէՅ: Ուտիսին՝ կաթով կամ սերով: Պասին՝ լիմոնով կամ թթու քաղցրաւէնիով: 2որս մարդու համար սովորաբար լիրց-

նում են մի թէյի գդալ թէյ։ Թէյամանը պէտք
է ծածկել անձեռցով և զնել հեշտաեռի վե-
րայ շատ կարճ ժամանակ, այնպէս որ թէյն
չը եռ գայ, որովհետեւ եռցրած թէյը կորցնում
է հոտն ու համը և վնաս է առողջութեան։

2. ՍՈՒՐՃԱ: Ուտիսին՝ կաթով կամ սերով։
Պասին՝ նշէկաթով, նշէհացով և կամ շաքարա-
նշով։

Ինչպէս թէյի, այնպէս էլ սուրճի հետ տա-
լիս են հաց ու կարաղ, պարսկմատ, բաղրա-
հաց։ Պասին՝ բլիթ, սպիտակ հաց։

Նայելով մարդու միջոցներին և առողա-
կան դրութեան՝ կարելի է զործ զնել զանա-
դան սուրճեր, օրինակ՝ խոզկաղինի, զարու և
խոկական սուրճ։

3. 6 ԲԱԺԱԿ ԿԱԹ։

4. ԿԱԿԱՕ: (Կայ արտասահմանի՝ ամենա-
լաւը բլօկէր գործարանից և Ռուսաստանի՝
էյնէմ գործր.)։ Մի բաժակի համար վերցրու
մէկ լիքը թէյի գդալ կակաօ և 2 թէյի գդալ
շաքարաւաղ, ածած բաժակի մէջ և լաւ խառ-
նիր, յետոյ վրէն լցրու եռցրած ջուր կամ եռ-
ցրած կաթ։

Ցանկացողը կակաօ և շաքարը կարող է
խառնել մէկ թարմ ձռւով և յետոյ վրէն լցնել
եռցրած կաթ, որ աւելի մննդարար է։

5. ԽՈԶԱՊՈՒԽՏ ԵՒ ԵՐՃԻԿ: Մանանեխով,
վայրի բողկով (քրենի) և բացախով։

6. ԽԱՏԻՄՐ ԵՒ ՀԿՆԿԻԹ։

7. ՊԱՆԻՐ։

8. ԿԱՐՄԻՐ ԲՈՂԿ, որ պէտք է մարուր
լուանալ։

9. ՓԱՅԼՈՒԿՆ (սելեճա) ԶՈՒԾ ՊՐՈՎԱՆ-
ՍԻ ԿԱՄ ԶԻԹԱՊՏԴԻ ԶԵԹՈՎ ԵՒ ՔԱՑԱԽՈՎ։ Մէկ
հատ հասարակ կամ հոլլանդական 2 փայլունկ
թրջիր ջրի կամ թէյի մէջ, մաքրիր, լուա, եր-
կարութեան վերայ միջից կտրտիր, ողնաշարը
հանիր, երկու կէսերը դարձեալ միասին դիր,
լայնութեան վերայ կտրտիր, դիր փոքր բլիւդի
վերայ, մի կողմը ածա մանրացրած սոխ, իսկ
միւս կողմը բարակ կտրտած գետնախնձոր,
վրէն ածա մի գդալ պրօվանսի կամ ձիթա-
պտղի ձէթ, խառը (սիրողների համար) մի գը-
դալ բացախի, $\frac{1}{8}$ թէյի գդալ մանանեխի, ըլչ
աղի և շաքարի հետ։

10. ՄՄԻ ՎԻՆԵԳՐԵՏ: Վերցրու եփած կամ
տապակած միսը, 6 հատ եփած գետնախնձոր,
խորոված ճակնդեղ, 1—2 հատ կճպած թթու
խիար, այս ամենը մանիր կտրտիր և խառնիր
մանանեխի սոուսի հետ, որ պատրաստում է
այսպէս։ $\frac{1}{2}$ թէյի գդալ մանանեխը, $\frac{1}{4}$ բա-
ժակ ջուր, $\frac{1}{2}$ գդալաշափ շաքարաւաղ, մի գը-

դալ պլրօվանսի ձէթ, երկու գդալ քացախ և
ով ուզում է մէկ կամ երկու էլ ձուի դեղնուց
լաւ խառնում են: Վինէզըէտի վերայ ուտելուց
առաջ կանաչի են կտրտում:

11. ՊԱՍՈՒԱՅ ՎԻՆԵԳՐԵՏ: Վերցրու 1
գրվանքա կարմիր լոբի, 1. գրվ. ճակնդեղ և
1 գրվ. գետնախմնձոր, առանձին առանձին ե-
փիր և յետոյ վերջինները մանր կտրտելով խառ-
նիր միասին, վրէն ածա 2 գդալ կերակրի ձէթ
և 2 գդալ քացախ, աղ, պղպեղ և $\frac{1}{4}$ գրվ. ձի-
թապտուղ:

12. ՆՈՐ ՍՈՒՆԿ ՏԱՊԱԿԱԾ: Մի ափսէ
լիքը սունկ պէտք է լաւ մաքրել, լուանալ, կը-
տրտել և վրէն ալիւր ցանել: Թապի մէջ եռցնել
իւլ կամ կերակրի ձէթ, մէջը տապակել մէկ
նոր սոխ, յետոյ ածել նորա մէջ՝ աղ արած
սունկը և տապակել միշակ կրակի վերայ, դարձ-
նել միւս երեսին և տապակել, ածելով վրէն
սամիթ, մաղղանոս և պղպեղ: Իւզով պատրաս-
տածի վերայ կարելի է լցնել $\frac{1}{2}$ բաժակի թրթ-
ուասեր և մի անգամ եփ տալ:

13. ՆՈՐ ՍՈՒՆԿ ԽՈՐՈՎԱԾ: Մի ափսէ լի-
քը թարմ սունկը լաւ մաքրիր, լուա, վրէն ցա-
նիր աղ, դարսիր թաւի մէջ և դիր հնոցում
մինչև կխորովուի:

14. ՍՊԻՏԱԿ ԼՈԲԻ ԿԱՄ ՓԱՍՈՒԼԻԱ: Վեր-

ցրու երկու բաժակ լրբի, մի քիչ աւելի ջուր,
եփիր առանց աղ զցելու, մինչև կփափկի. ա-
ւելորդ ջուրը դէն ածա, աղ արա, վրէն
աւելցրու ձէթով տապակած սոխ և մի քիչ էլ
քացախ:

15. ՊԱՏԻՃԵՒՈՐ ԿԱՆԱՅ ՍԻՍԵՌ: 2 գրվ.
պատիճառը կանաչ սիսեռը (горохъ) մաքրիր
պատիճներից, տծա եռցրած ջրի մէջ, նախա-
պէս լցնելով մէջը մի գդալ աղ, եփիր մինչև
կփափկի, յետոյ ջուրը դէն ածա և հանիր ափ-
սէր վերայ. սեղան տանելիս տար նաև հալած
տար իւղն առանձին: Ամեն մի շիշ ջրին պէտք
է ածել մի թէյի գդալ աղ:

16. ԽՈՐՈՎԱԾ ՇԱՂԳԱՄ ԻՒՂՈՎ: 6 հատ
շաղգամ լուա, կճեպը քերիր և դիր հնոցը որ
եփուի. պէտք է ուտել լաւ իւղով: Կամ թէ՝
պէտք է խորովել շաղգամը, գդալով բոլոր գու-
լը միջից հանել, աւելցնել վրէն մի գդալ իւլ,
մի ձու, ածել վրէն մի բաժակ կաթ, խառնել
և թխել ըրեղանով:

17. ԽՈՐՈՎԱԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ԻՒՂՈՎ: Գետ-
նախմնձորը լուա, սրբիր ու թաղիր մոխրի մէջ
կամ դիր հնոցի մէջ ու շուտ շուտ տուր
որ չայլուի: Խորովելուց յետոյ պէտք է կճպել,
վրէն աղ և իւլ անել և ուտել:

18. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ: Որպէսդի գետ-

նախնձորը փխրուն լինի, պէտք է մաքրել, լուանալ, ածել եռցրած ջրի մէջ առանց աղի, լաւ եփել, նայել որ շատ չեփուի, ջուրը դէն ածել, իսկոյն աղ անել, պղնձի խուփը ծածկել, մի քիչ շարժել և թողնել անշարժ $\frac{1}{4}$ ժամ։ Դետնախնձորից գոյացած ջուրը ածել ճաշու արգանակի մէջ։ Խոկ այսպէս պատրաստած գետնախնձորը հետևեալ կերպով են գործ դնում։

19. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ ԻՒՂՈՎ ԵՒ ՄԱՂԴԱԽՈՎ։ Եփում են գետնախնձորը վերոյիշեալ կերպով, խառնում են հետը 2—4 գդալ տաք իւղ և վրէն ածում մանր կտրտած մաղդանոս և սամիթ։

20. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ԻՒՂՈՎ ԵՒ ՀՈՒՈՎ։ Եփում են գետնախնձորը, հետը խառնում են 2—4 գդալ տաքացրած իւղ, խառնած 2 հատ պինդ եփած և մանր կտրտած ձուի ու 2—4 գդալ եռցրած կաթի հետ։

21. ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ԿԱԹՆԻ ՍՈՌԽՈՎ։ $\frac{1}{2}$ գդալ ալիսր, կէս մանր կտրտած սոխը տապակիր $\frac{1}{2}$ գդալ իւղի մէջ, խառնիր $\frac{1}{2}$ բաժակ կաթի հետ և եռցրու. յետոյ ածա մէջը եփած, մաքրած և շերտ շերտ կտրտած գետնախնձորը, խառնիր, աղ արա, պղնձի խուփը ծածկիր և 2—3 անգամ եռցրու. բլիւգի վերայ ածելիս դրէն պէտք է մաղդանոս ցանել։ Կարելի է

հետը խառնել նաև երկու հատ եփած ու մանր կտրտած սունկ։

22. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ՍՈՒՆԿԻ ՍՈՒԽՈՎ. 2—3 գդալ իւղի մէջ տապակիր մի գդալ ալիսր, մի սոխ և 3 հատ եփած և մանր կտրտած սունկ, մէջը ածա 2 բաժակ սնկի ջրից, եռցրու և ածա եփած գետնախնձորի վերայ։

23. ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՊԻՒՐԻ ԵՐԻՇԿՈՎ. Դետնախնձորը լուա, կճպիր, նորից լուա, ածա աղաջրի մէջ, եփիր, յետոյ ջուրը դէն ածա, գետնախնձորը շուտով տրորիր վիայտէ գդալով, աղ արա, մէջը ածա մի թէյի գդալ ալիւրով կարմրացրած մի գդալ իւղ, խառնիր, վրէն $\frac{1}{2}$ —1 բաժակ կաթ լցրու, խառնիր և եռցրու. երբ բլիւգի վերայ հանես՝ չորս կողմը եփած կամ խորոված տաք երիշկներ շարիր։

24. ՏԱՊԱԿՆԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ. Դետնախնձորը եփիր, մաքրիր և տապակիր իւղի մէջ, գցելով մէջը վլուխ կամ կանաչ սոխ։

25. ԵՂ ՈՒ ՀՈՒՈՎ ԷՐԻՇՏԵԱՅ. 1 գրկ. էրիշտան եփիր աղաջրի մէջ. ջուրը քամիր. պըղնձի մէջ ածա $\frac{1}{4}$ գրկ. իւղ, եռցրու, մէջը ածա եփած էրիշտան, վրէն ածա չորս ձու և խառնիր մինչեւ կարմրի։

26. ԿԱԹՈՎ ՄԱՂԴԱԽՆՁԱՅՆ ԿՐՈՒՊԸ (Քարասերմ-

նիկ): Յ բաժակ կաթը եռցրու, մէջը ածա $\frac{1}{2}$ բաժակ մաննայեա կրուպա, նորից եփիր, միենոյն ժամանակ խառնելով, որ կոշտեր չպոյանայ: Ածելիս պէտք է աղ անել և ով ցանկանում է մի քիշ էլ կարագ:

27. ԿԱՂԱՄԲՈՎԱ ՊԻՐՈԳ: Վերցրու $\frac{1}{4}$ բաժակ ջուր, Յ մսխալ չոր թթվամոր (գրօժժ), մի թէյի գդալ աղ, 1 ձու, $\frac{1}{4}$ գրվ. իւղ և 2 գրվ. ալիւր. առաւօտը վաղ այս բոլորը շաղախիր, խմոր հոնցիր և անձեռոցով ծածկիր, որ բարձրանայ: Մինչև խմորը կըհասնի՝ պէտք է վերցնել կէս գլուխ կաղամբ, մանր կարտել փոել մաղի վերայ, եռցրած ջուր ածել վրէն, քամել, աղ անել, ածել պղնձի մէջ $\frac{1}{4}$ գրվ. իւղի հետ և տապակել միենոյն ժամանակ խառնելով, մինչև որ կփափի, բայց այնպէս որ շայրուի և չկարմրի: Երբ սառչի, պէտք է 2 պինդ եփած և կտրտած ձու խառնել մէջը, աղ ու մի քիշ էլ պղպեղ անել: Երբ խմորը պատրաստուի՝ պէտք է զրգնակով բաց անել, վրէն ածել կաղամբն ու չորս ծայրերը հաւաքելով վրէն կանոնաւոր եերկար ու բառանկիւնի ձետալ. այնուհետեւ թիթեղեայ ժաւայի վերայ մի փոքր իւղ քսելով պիրոզը զնելու է նորա վերայ և թողնելու է կէս ժամի չափ, որ բարձրանայ: յետոյ ձուն հարելով փետուրով պէտք

է երեսին քսել և տաք հնոցի մէջ զնել կէս ժամի չափ:

28. ԲՐՆՉՈՎԱ ՈՒ ԶՈՒՈՎ ՊԻՐՈԳ: Խմորը պէտք է պատրաստել վերոյիշեալ ձեռով (№ 27): Մի բաժակ բրինձը լուած սառը ջրում, այդ ջուրը գէն ածած, վրէն նոր ջուր լցրու այնքան, որ բրինձը ծածկէ և զիր եփուի: Երբ բրինձը փափկի, միայն չափից աւելի չեփուի, ածարամիշի մէջ, վրէն սառը ջուր լից և թող միենչի բոլորովին քամուի: յետոյ ածա քրեղանի մէջ, աւելցրու վրէն մէջը սոխ տապակած $\frac{1}{4}$ գրվ. իւղ, աղ արա, 2 կամ 3 պինդ եփած և մանրացած ձու խառնիր. մնացածը կատարիր ինչպէս որ գրուած է № 27-ի մէջ:

29. ՄՍՈՎ, ԲՐՆՉՈՎԱ ՈՒ ԶՈՒՈՎ ՊԻՐՈԳ: 1/2 գրվ. եփած տաւարի միսը պէտք է մանր ծեծել և քիշ տապակել մի գդալ իւղի մէջ. $\frac{1}{2}$ բաժակ բրինձը եփել (№ 28), վերցնել 2 հատ պինդ եփած ու մանրացած ձու, այս բոլորը խառնել և պիրոզը շինել ըստ № 27-ի:

30. ԹԱՐՄ ՍՈՒՆԿՈՎ ՊԻՐՈԳ: 2 գրվ. թարմ սունկը մարբիր, կտրտիր, ածա պղնձի մէջ, աղ, պղպեղ, սոխ և սամիթ աւելցրու և զիր կրակի վերայ: Երբ սունկը ջուր թողնէ իրանից և բոլորովին չմշկի, այն ժամանակ մէջը $\frac{1}{8}$ գրվ. իւղ և 2 գդալ թթուասեր ածա և

լաւ եփիր, որ սունկը հում չմնայ. յետոյ վերցրու կրակից, սառցրու, և 2 գրվ. ալիւրից պատրաստած խմորի մէջ դիր, ինչպէս որ սուած է № 27-ի մէջ:

31. ՏԵՊԱԿԱԾ ԵՒ ԽՈՐՈՎԱԾ 2ԿՆԵՐ: 2 գրվ. մեծ ձկներից, ինչպէս են՝ շշուկա, սպիտակ սաղմոն (բելորիբիցա), սիգա, կասպուտ (լեշչա), պերկ (սաղան), թառափ (ասենբինա) և այլն, մաքրիր, լուա, միջից կէս արա, սղնաշարը հանիր, կտրտիր, աղ արա և այնպէս թող 1 ժամ, յետոյ շորով ցամաքացրու և վրէն ալիւր կամ փշրած պարսիմատ (սուխարի) ցանիր: Թաւան պէտք է տաքացնել, մէջը $\frac{1}{4}$ գրվ. իւղ կամ բաղցը ձէ՛թ դնել և երբ եռ գայ՝ ձուկը մէջը ածել և մի՞՛քիչ էլ պարսիմատ ածելով վրէն՝ տապակել երկու կողմից էլ, սպատառաքաղով խառնելով. բիւդի վերայ ածելուց յետոյ՝ վրէն պէտք է մազդանոս ածել:

Խորովելու համար՝ ձուկը պէտք է մաքրել, լուանալ, աղ անել, քերել և ամեն կողմը իւղ բսելով՝ դնել հնոցի մէջ: Երբ մի բիշ խորովուի՝ պէտք է ցանել վրէն պարսիմատ և մի բանի անգամ էլ իրանից թողած ջրից, մինչև բոլորովին կխորովուի:

Թէ տապակած և թէ խորոված ձկան հետ

յարմար է մօտ բերել տապակած գետնախնձոր և սալատ:

32. ԿԱՏԼԵՏ: Մի գրվանքա փափուկ մսից ոսկորները հանիր, շատ մանր ծեծէ, միջից ջղերը հան, որոնց կարելի է արգանակի մէջ ածել, աղ և պղպեղ արա, մէջը խառնիր թըրջած և բամած բուլկի, կէս գդալ իւղ հետը կէս սոխ տապակած, 1 հում ձու, մի քիշ ջուր կամ արգանակ, այս բոլորը խառնիր, կլոր կատլէտների ձև տուր, շաղախիր փշրած պաքսիմատի մէջ և դարսելով թաւայի վերայ՝ եռցրած իւղի մէջ՝ երկու երեսն էլ տապակիր: Կատլէտները բլիւդի վերայ դարսելուց յետոյ՝ վրէն պէտք է ածել հիւթը, որ այսպէս է պարաստառամ. միենոյն իւղի մէջ պէտք է 2 գդալ ջուր, սեր կամ թթուասեր ածել, մի երես եռցնել և սոխ կտրտել մէջը: Կատլէտի հետ տալիս են եփած կամ տապակած գետնախնձոր, գետնախնձորի պիւրէ, գազարի սօսւս, կանաչ սիսեռ և այլն:

33. ԵԶԱՆ ՈՒՂԵՎԸ ԽՈՐՈՎԱԾ: Ուղեղը պէտք է ջրում դրչել ջուրը փոխելով մինչեւ որ արինից մաքրուի. յետոյ թաղանթից հանել և ջրի մէջ ողողել: Յ բաժակ ջրի մէջ եփ տալ 2 գդալ բացախ, 2 գափնի տերե, 5 հատ բահար և 2 թէյի գդալ աղ և ուղեղը դնել

նորա մէջ, 15 րոտէ թող եփուի, յետոյ տափակ գդալով հանիր, սառցրու, կտրտիր, շաղախիր 2 ձուի և փշրած պարսխմատի մէջ և տապակիր $\frac{1}{4}$ գրվ. իւղի մէջ: Հետը կարելի է տալ գետնախնձորի պիւրէ կամ կանաչ սիսեռ (գարոխ):

34. ԽՄՈՐԻԿԱՆԵՐ (ՅԼԻԿԻ): Ճաշից 7 ժամ առաջ պէտք է խմոր պատրաստել 2 գրվ. ցորենի ընտիր ալիւրից, $\frac{3}{4}$ գրվ. գրեչնի ալիւրից, և $1\frac{1}{2}$ բաժակ գոլ կաթից, նախտպէս բացանելով կաթի մէջ 4—6 մսխալ չոր թըլթխմոր (գրօժժ), —լաւ հարիր և շորով ծածկելով թող որ բարձրանայ: Ճաշից 2 ժամ առաջ խմորը լաւ հարիր, հետը խառնիր 1 թէյի գդալ աղ, 2 ձու, 2 գդալ իւղ և 1 թէյի գդալ շարարաւազ: Նորից հարիր, 3 բաժակ եռցրած կաթ աւելցրու: Խմորը այն թանձրութիւնը պէտք է ունենայ, որ ակիշին չպէտք է կաշի, այլ թափուի նորանից: Եթէ խմորը մի ըիշ թանձր դուրս գայ՝ հետը $\frac{1}{4}$ բաժակ եռցրած ջուր աւելացրու: Թող որ բարձրանայ և էլ ձեռը մի տուր, որ խմորը չնստի, զգուշութեամբ տար քուրայի կամ պլիտայի վերայ. վերցրու փոքր թաւայ, մէջը աղ ցանիր, տարացրու, շորով մաքրիր, փետուրով իւղ րսիր և յետոյ գդառով այնքան խմոր ածա, որ թաւայի տակը ծած-

կէ և թխիր: Երբ խմորիկը բարձրանայ և կարմրի, վրայից պէտք է իւղ ըսել: Ամեն մի հատը եփելուց առաջ թաւայի մէջ իւղ պէտք է ըսել:

Խմորիկի հետ տալիս են կարագ և թթուասեր, որ այսպէս է պատրաստում. — 3 շիշ կաթի մէջ խառնում են $1\frac{1}{2}$ բաժակ թարմ և թանձր թթուասեր և դնում տաք սենեակում. Երբ թլթուի՝ լաւ պէտք է խառնել և սառը տեղ տանել:

35. ՍՈԴԱՑՈՎ ԽՄՈՐԻԿ: Սա այն առաւելութիւնն ունի, որ միշտ ուզած ժամանակ կարելի է պատրաստել. Վերցրու 1 գրվ. ցորենի 1 գրվ. գրեչնի ալիւր, շաղախիր $4\frac{1}{2}$ կամ 5 բաժակ տաք ջրի մէջ, աղ արա, հարիր և երբ թաւան արդէն տաքացրած է՝ վերցրու մի կիսատ թէյի գդալ լիմոնի աղ, ածա $\frac{1}{2}$ բաժակ գոլ ջրի մէջ, խառնիր և ածա խմորի մէջ: $\frac{1}{2}$ բաժակ գոլ ջրի մէջ իսկոյն խառնիր մի կիսատ թէյի գդալ սուզա, ածա խմորի վերայ, խառնիր և իսկոյն թխիր ինչպէս վերը ասուած է: Հետը կարելի է տալ իւղ, թթուասեր և խաւիար:

36. ԽՄՈՐԻԿԱՆԵՐ ՄԻԱՑՆ ԱԼԻՒՐԻՑ: Խմորը հունցում են և թխում ինչպէս № 34-ում ասուած է, միայն չպէտք է խառնել գրեչնի ալիւր, այլ նորա տեղ աւելացնել $\frac{3}{4}$ գրվ. նոյն ցորենի ալիւրից:

Բ. ՄԱՍՀ

ՏԱՐ ԵՒ ՄԱՐԼ, ՈՒՏԻՍՈՒՆՑ ԵՒ ՊԵՍՈՒՆՑ ԱՐԳԵ- ՆԵԿՆԵՐ

1. ՄՍՀ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ

37. ՄՍԷ ԱՐԳԱՆԱԿԱԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՆ
ԱՌՎԱՍՏՐԱԿ: 4 Հոգու համար պէտք է վերց-
նել 1—2 գրի. տաւարի միս՝ բուդից, պրոչուկից,
կոկողնակից, բղի տակից, թիսակամսից, ողնաշա-
րից կամ հարսնակուլից. Տաւարի միսն առաջ
պէտք է լուանալ, բայց չքամել, ածել պղնձի մէջ,
վրէն ածել 10 բաժակ ջուր, մի քանի անգամ եփ
տալ թէժ կրակի վերայ, քափը քաշել (կարելի
է և քափը մէջը թողնել, որովհետև նա իր մէջ
աւելի սննդարար մասեր է պարունակում): Սո-
խը, $\frac{1}{2}$ գազարը, մի փորի մաղպանոս, մի քիչ
նեխուր, պրաս մաքրեցէք, լուացէք, մանր կտըր-
տեցէք և բոլորը միասին մի քիչ խորովեցէք
պլիտայի երկաթի վերայ, յետոյ ածեցէք ար-
դանակի մէջ և թողէք որ թոյլ կրակի վերայ

կամաց կամաց եփուի մինչև ճաշը։ Այս արգանակը, որ շինուալ է տաւարի մսից և թարմ արմտիքներից, առանց դափնի տերևի և պըղպեղի, կոչւում է բուլիօն։

Եթէ մէջը կրուպա (քարասերմնիկ) են
ածում, դա կոչւում է արգանակ, որին կարելի
է սպիտակ գոյն տալ մի բաժակ կաթով, մա-
նաւանդ երբ որ առանց մօխ են եփում:

Եթէ մսազրի մէջ ճակնդեղ են անում կոչ-
ւում է ըռոշշչ։ Իսկ եթէ անում են թթու կամ
թարմ կազամք՝ շշի է կոչւում։ Տօրշչը, շշին
հայն կարելի է սպիտակացնել մի բաժակ
թթուասեր ածելով։

Բուլիօնին ճաշից քիչ առաջ պէտք է աղ անել և տարացնել։ Նորան անում են սամիթ և մաղդանոս։

38. ՏԱՐԱՐԻ ՄԻՒՍ ՄԻՋՄ պէտք է թարմ
միս առնել և ամենալավից, որովհետև առող-
ջուլթեան համար ոչ թէ նորա քանակովթիւնն
ունի նշանակութիւն, այլ որակութիւնը։ 4 մար-
դու համար օրական անհրաժեշտ է 3 գրվ. միս
առնել պոչուկից, որովհետև նորանից կարելի
է և արգանակ պատրաստել և տապակած։ Ու-
կորներից՝ արգանակ, իսկ փափուկ մսից տա-
պակած կամ կատէտ։

39. ՏԱՊԱԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Տապակածի



համար գառան մսի կարեսոր մսերն ընտրելով
մնացած ոսկորներից կարելի է արգանակ եփել
արմտիքներով և պերլովայա կրուպով:

Տաղակածի հորթի մսի ոսկորներից՝ շին-
ուում է արգանակ գետնախնձորի պիւրէով:

Տաղակածի տաւարի մսի ոսկորներից ա-
ւելացնելով վրէն 1 գրվ. կրծքամիս եփում են
թթու շի:

Եթէ տաւարի մսի ճարպը դեղին է՝ պա-
ռաւի միս է, իսկ եթէ սպիտակ է՝ ջահիլինն է:

40. ԻՆՉՊԻՍ ԽՄԱՆՍՆՔ ԲՈՒԼՔՕՆԸ, ԳԵՏՆԱ-
ԽՆՉՈՐԸ, ՏԱՊԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԹԷ
ՀԷ: Պէտք է պատառաքաղով տեսնել, եթէ
հեշտ է մտնում մսի, գետնախնձորի մէջ եայն,
կընշանակի պատրաստ է:

41. ԱՐՄՏԻՔ, ԳԵՏՆԱԽՆՉՈՐ ԵՒ ԿԱՆԱՇԻ
ՄԱՔՔԵԼՈՒ ԵՎԱՆԱԿԸ: Արմտիքը պէտք է ողողել
կամ ուղղակի 5 բոպէ ջրի մէջ ածել, յետոյ
գանակով ցեխերը քերել, լաւ լուանալ և ջրի
մէջ պահել մինչեւ եփելը: Գետնախնձորը դա-
նակով կճակել և իսկոյն ածել ջրի մէջ, որ չը
սեանայ, իսկ կանաչու փշացած մասերը հեռա-
ցնելով լուանում են, ածում են խախալի մէջ,
նորից ջուր են ածում վրէն և կտրտում:

42. ԱՐՄՏԻՔՈՎ ԵՒ ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ ՄԵ-
ԽՆՉՈՒՐ: 2 գրվ. տաւարի մսից և արմտիքից

եփել մսաջուր ինչպէս ասուած է № 37-ում:
Ճաշից $\frac{1}{2}$ ժամ առաջ վերցրու 1 թարմ գա-
ղար, 1 մաղդանոս, 1 շաղգամ և 1 ափսէ լի-
քը գետնախնձոր, այդ բոլորը մաքրիր, լուա,
կտրտիր և ածա բուլիօնի մէջ: Երբ որ եփուի
ածա մէջը մաղդանոս կամ սամիթ: Միսը կա-
րելի է և առանձին հանել:

43. ԱՐՄՏԻՔՈՎ, ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ, ՇԱԴ-
ԳԱՄՈՎ ԵՒ ԿԱՂԱՄԲՈՎ ՄՄԱԶՈՒՐ: 2 գրվ. տա-
ւարի մսից և խորոված արմատներից եփիր
մսաջուր № 37-ի եղանակով: Ճաշից մէկ ժամ
առաջ մէջը աւելցրու 1 հատ մաքրած և կտըր-
տած րաղցր շաղգամ, $\frac{1}{2}$ գաղար, $\frac{1}{2}$ մաղդա-
նոս, $\frac{1}{4}$ զլուխ թարմ կաղամբ 4 կտոր արած
և կէս ժամ էլ առաջ 6 հատ կտրտած գետնա-
խնձոր, և այս բոլորը լաւ եփիր. ածելիս վրէն
աւելցրու կանաչի:

44. ՊԻՐՕԺԿՈՎ ՄՄԱԶՈՒՐ: 2 գրվ. տա-
ւարի մսից և մի քիչ խորոված արմատներից
եփիր մսաջուր № 37-ի կերպով: Ճաշից մի ժամ
առաջ մսաջրից միսը պէտք է հանել և մանր
ծեծել: $\frac{1}{2}$ զգալ իւղի կամ մսի շաղսւթեան
մէջ մի քիչ տապակել $\frac{1}{2}$ սոխի գլուխ մանր
կտրտած, միսը ածել նորա մէջ, աղ և պղպեղ
անել և խառնել: 1 ձու, քիչ ջուր, $\frac{1}{2}$ գդալ աղ
և $1\frac{1}{2}$ բաժակ ալիւր խառնելով պինդ խմոր

հունցիր, բաց արա շատ բարակ, միսը մանր մանր գունդերով դարսիր խմորի վերայ, խմորի միւս կէսը ծածկիր վրէն, ափերը ջրով թաց արա, բաժակով մանր պիրոժկիք կտրտիր և ծայրերը ամրացրու. ճաշից $\frac{1}{4}$ ժամ՝ առաջ ածա եռցրած մսաջրի մէջ. երբ կըբարձրանան ջրի երեսին՝ պղնձից ածա և մէջը աւելցրու մաղղանոս կամ սամիթ:

45. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՐԳԱՆԱԿ: $1\frac{1}{2}$ գրվ. տաւարի մսից ոռկորներն ու ջղերը հանելով, լուա, մանր կտրտիր, ածա 8 բաժակ եռցրած սառը ջրի մէջ և ամբողջ գիշերն այնպէս թող: Նախաճաշի ժամանակ աղ արա, 4 կտոր ծեծած շաքար և 1 կամ 2 հում ձուի գեղնուց. ածա կաթսայի մէջ և դիր քուրայի վերայ ու տարացրու. Միսը, իբրի բոլորովին անպէտք, պէտք է վրէն ածել:

46. ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ ԵՒ ԲՐՆՉՈՎ ԿԱՄ ՄԱՐԳԱՐԵՍԱՍԵՐՄԻԿՈՎ (պերլօվայ երշակ) ԱՐԳԱՆԱԿ: Եփիր մսաջուր № 37-ի պէս: Ճաշից երկու ժամ՝ առաջ մէջն ածա 1 գինու բաժակ մարզարտասերմիկ կամ բրինձ, իսկ կէս ժամ առաջ 1 գրվ. մաքրած գետնախնձորը և եփիր: Ածելիս վրէն կանաչի ցանիր:

47. ՄԱԿԱՐՈՆՈՎ ԵՒ ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. տաւարի մսից և արմտիրից

մսաջուր եփիր № 37-ի պէս: Ճաշից կէս ժամ առաջ մէջը ածա մի գրվ. հում գետնախնձոր, իսկ յետոյ $\frac{1}{4}$ գրվ. մանր կտրտած մակարօն և եփիր: Ածելիս ցանելու է կանաչի:

48. ԷՐԻՇՏԱՅ (լապով): 2 գրվ. տաւարի մսից և արմտիրից եփիր մսաջուր ինչպէս ասուած է № 37 ում: 1 ձու, աղ, ջուր, $\frac{1}{2}$ գրվ. ալիւր միաբնին խառնել և պինդ խմոր հունցիր. բարակ բաց արա, վրէն ալիւր քսիր, շերտ շերտ կտրտիր, շերտերը միմեանց կողոքին շարիր, սուր դանակով մանր կտրտիր, սեղանի վերայ փուիր, որ չորանայ և ալիւրը մաքրիր: Ճաշից առաջ էրիշտան ածա եռցրած մսաջրի մէջ, մի թէյի գդալ աղ արա և նորից եփ տուր: Երբ էրիշտան ջրի երեսին բարձրանայ՝ արդէն պատրաստ է, պէտք է ածել և վրէն կանաչի ցանել:

49. ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. տաւարի մսի հետ խառնելով 1 սոխ, 1 դափնի տերե և բիչ պղպեղ՝ մսաջուր եփիր № 37-ի համեմատ: 1 գրվ. մաքրած գետնախնձորը և մի բուլզու երրորդ մասը եփիր այս մսաջրի մէջ, աւելցրու վրէն՝ $\frac{1}{2}$ գդալ իւղի մէջ $\frac{1}{2}$ սոխը մանր կտրտած և տապակած և եփիր: Յետոյ միսը հանիր, իսկ մսաջուրը բամիր բամիչի մէջ, աղ արա, նորից մէջն ածա կտրր-

տած միսը, կանաչի աւելացրու և տար սեղան:

50. ԹԵՐՄ ՍՈՒՆԿՈՎ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. տաւարի մսից և 1 սոխից մսաջուր եփիր № 37-ի համեմատ: Կէս ափսէ սպիտակ թարմ սունկը մաքրիր, լուս, շաղախիր մի գդալ ալիւրի մէջ, մի քիչ տապակիր թաւայի մէջ մի գդալ իւղի և մանր կտրտած սոխի հետ, ածա մսաջրի մէջ, մէջը մի բանի հատ մաքրած և մանր կլտրտած գետնախնձոր ածա, մի բանի անգամ եփ տուր, որ սունկն ու գետնախնձորը հում շման: ածա մէջը թթուասեր և մի քիչ պլղպեղ և հանելուց յետ՝ կանաչի արա:

51. ԲՕՐՃ: 2 գրվ. շաղ տաւարի մսից և արմտիքներից եփիր մսաջուր № 37-ի համեմատ: 2 ճակնդեղ (ճարխալ), $\frac{1}{2}$ գաղար, $\frac{1}{2}$ սոխի գլուխ և 2 գետնախնձոր՝ մաքրիր, բարակ կտրտիր, ածա կաթսայի մէջ, աւելցրու $\frac{1}{3}$ գլուխ թթու կաղամբ, 1 գափնի տերի, պղպեղ, մի գդալ իւղ և 2 գդալ մսաջուր, խառնիր միասին, գիր թոյլ կրակի վերայ, ծածկիր և երբեմն խառնիր: Երբ ճակնդեղը փափկի, վրէն մսաջուր ածա այնքան որ ծածկի և թող որ քիչ քիչ եփուի, լցնելով մէջը թթուասեր: Ամանների մէջ ածելուց յետոյ մաղպանոս և սամիթ ցանիր մէջը:

52. ԹԵՐՄ ԿԱՂԱՄԲՈՎ Շ.2Ի: 2 գրվ. տա-

ւարի մսից եփիր մսաջուր № 37-ի համեմատ: $\frac{1}{2}$ գլուխ կաղամբը մաքրիր և 4 մասն արա, ձաշից $\frac{1}{2}$ ծամ առաջ ածա մսաջրի մէջ կլտրտած գաղարի հետ և ածելով մէջը $\frac{1}{2}$ բաժակ սառը ջրում բաց արած մի գդալ ալիւր, եփ տուր. կերակուրն ածելիս սպիտակացրու $\frac{1}{4}$ կամ $\frac{1}{2}$ բաժակ թթուասերով և կանաչի արա:

53. ԹԹՈՒ ԿԱՂԱՄԲՈՎ Շ.2Ի: 2 գրվ. տաւարի մսից, 1 սոխից, աւելացնելով և 1—2 չոր սունկ և 1 գափնի տերի՝ եփիր № 37 մըսաջուր: 1 գրվ. թթու կաղամբը բամիր, կլտրտիր, մի գդալ իւղի մէջ $\frac{1}{2}$ գլուխ մանր կտրտած սոխը քիչ պղպեղով տապակիր մինչև որ փափկի և ածա մսաջրի մէջ, եփիր այնքան, մինչև որ կաղամբը փափկի, հետը խառնիր ջրի մէջ լուծած մի գդալ ալիւր, եփ տուր, եթէ ուզում ես թթուասերով էլ սպիտակացրու:

54. ԿԱՆԱՀ Շ.2Ի ԵՎՀԱՌՈՎ: 2 գրվ. տաւարի մսից եփիր № 37-ի մսաջուր, մէջը մի գդալ ալիւր ածա և եփ տուր. 1 գրվ. մատղաշու մաքրած եղինձը լուս, ածա եռցրած աղացրի մէջ, եփ տուր, խախալի մէջ լցրու, բամիր, մանր կտրտիր, խկոյն լցրու եռցրած մսաջրի մէջ, եփիր մինչև փափկելը և ապա թթուա-

սերով սպիտակացրու ու սամիթ արա:

55. ԿԱՐՄԻՐ ՊՈՐԻՆԱՅԱՌ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. տաւարի մսից եփիր մսաջուր № 37-ի համեմատ: 1 գրվ. կարմիր պորինճանի սերմերը դէն ածա, մնացածը կտրտելով ածա կաթսայի մէջ, եփիր, քամիր և մէջը աւելցնելով 1 գդալ ալիւր, խտոնիր մոաջրի մէջ, եփ տուր և աւելցրու մէջը մի բիշ թթուասեր: Կարելի է շինել և առանց թթուասերի:

56. ԳԱՌԱՆ ՄՍՈՎ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. գառան միսը սառը ջրում լուա, վրէն ջուր ածա, եփիր, քափը բաշիր և մէջն ածելով մի սոխ, դափնի տերև և աղ ու պղպեղ, թող որ թոյլ կրակի վրայ եփուի: Ճաշից մի ժամ առաջ մէջն ածա արմտիք, քիչ էլ եփիր և երբ հանես՝ կանաչի արա:

57. ՀԱՒԻ ՄՍՈՎ ԱՐԳԱՆԱԿ: Հաւը մաքրիր, փորոտիքը հանիր, կտրտիր, վրէն ջուր ածա և եփիր. յետոյ մէջը լցրու 1 գինուր բաժակ բրինձ, մարգարտասերմիկ կամ մաննայեա կրուափա հայլն. աղ արա, եփիր և հանելիս կանաչի արա:

58. ՀՆԴՈՒՀԱՒԻ ՈՏ ԳԼԽՈՎ ԱՐԳԱՆԱԿԸ պատրաստում է միևնոյն կերպով, ինչպէս հաւի մսով արգանակը:

59. ՀՆԴՈՒՀԱՒՈՎ ԱՐԳԱՆԱԿՆ ԷԼ Նոյն ձեռով է շինուում:

60. ԲԱԴՈՎ ԱՐԳԱՆԱԿ: Տանու բադը եփիր արմտիքի հետ, աւելցնելով մէջը 2 գափնի տերև, քիչ պղպեղ և աղ, 3 չոր սունկ և քամիր: 1 գինուր բաժակ եփած մարգարտասերմիկը, մանր կտրտած սունկը և թթուասեր լցրու արգանակի մէջ և եփիր մինչև կըպատրաստուի: Ածելիս՝ վրէն կանաչի արա:

61. ՍԱԳՈՎ ԱՐԳԱՆԱԿԸ պատրաստում է № 60-ի պէս:

62. ՀՈՐԹԻ ՄՍՈՎ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. հորթի միսը կտրտիր, լուա, մի անգամ եփատուր, քափը բաշիր, հանիր, նորից սառը ջրում լուա, աղ արա, նոյն մսաջուրը բամելով միսը մէջն ածա, աւելցրու գազար, սոխ և եփիր. մէջը լցրու $1/4$ բաժակ բրինձ և նորից եփիր:

63. ՃԱԿԱՐԴԵՎԻ ՏԵՐԵՒՈՎ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. տաւարի մսից և արմտիքից ու չորս սունկից պատրաստեցէք № 37-ում յիշուած մսացուրը և քամեցէք: Ճակնդեղի տերենները մաքրեցէք, լուացէք, կտրտեցէք և ածելով մսաջրի մէջ եփեցէք, մէջն ածեցէք մի գդալ ալիւր և նորից եփ տուէք: Ածելիս պէտք է ցանել վրէն կտրտած մաղպանոս:

64. ՄԱԿԱՐՈՆՈՎ ԱՐԳԱՆԱԿ: 2 գրվ. տա-

ւարի մսից և արմտիքից եփել մսաշուր № 37-ի համեմատ։ Մակարօնը կտրտելով ածել եռցրած զրի մէջ և եփել, երբ եփուի՝ բամել և պարձեալ ածել պղնձի մէջ, մսաշուրը ածելով վրէն՝ եփել թոյլ կրակի վերայ։ Ուրիշ պղնձում ածել 1 ձուի գեղնուց և $\frac{1}{2}$ բաժակ սեր ու խառնել սորա վերայ ածել 1 բաժակ տաք մսաշուր, լաւ խառնել և տաքացնելուց յետոյ քամել մսաշրի մէջ, աւելցնելով աղ և պղպեղ։

65. ԱՐՏԱՎԱՅՑ. Կովի արտալան և կուրծրը պէտք է կտրտել և լուսնալ. ջուրը եռ տալով միսն ածել մէջը և եփել այնքան, մինչեւ որ լաւ եփուի և մսաշուրը մի թիշ թանձրանայ. ածելիս վրէն ցանել կտրտած նեխուր։

66. ԽԱՇ. Ոչխարի կամ կովի ոտները, թափանը, շղանը և աղիքները մաքուր լուա. աղիքները շուռ տուր, միջի կեղտը մաքրիր, յետոյ անցկացնելով տաք զրի մէջ՝ դանակով քերիր, որ բոլորովին կեղտից մաքրուի, ապա մանր մանր կտրտիր բոլորը, իսկ ոտները միջից ճղիր, հանիր մէջի կոշտերը. այս ամենն ածա պղնձի մէջ, սառը զրով լուա և մի ամբողջ գիշեր այդպէս թող, որ հոտը դուրս գայ. առաւօտը մի բանի անգամ նորից լուանալով դիր կրակի վերայ որ եփուի, մինչեւ որ զուրը քիշ թանձրանայ։

Յանկացողը խաշը կարող է ուտել սըստորով։

67. ՎԱՐԵԿՈՎ ԵՒ ԿԱՐՄԻՐ ՊՈՐԻՆՃԱՆՈՎ ԱՐԳԱՆԱԿ. Վառեկլս մաքրիր, կտրտիր և լուա. 8 գլուխ սոխը մանր կտրտելով՝ տապակիր $\frac{1}{4}$ գրգ. իւղի մէջ. 3 գրգ. պորինճանը ածա տաք զրի մէջ, որ հեշտ կճպուի, կճպիր, կորիզը միջից հանիր և մնացածն ածա տապակած սոխի մէջ վառեկի հետ միասին, աւելցրու 2 բաժակ զուր, աղ արա և եփիր մինչև վառեկը լաւ կեփուի։

68. ԲՈՋԱՐԹՄԱՅ. 2 գրգ. ոչխարի միս կտրտիր, լուա, ածա պղնձի մէջ. եփիր, բափը քաշիր. եփելուց յետոյ մսաշուրը քամիր։ 6 գըլուխ սոխը մանր կտրտիր, վրէն ածա մսաշրի շաղութիւնից և մէջը տապակիր, յետոյ մէջը մսաշրին և եփած միսը լցնելով և աւելցնելով աղ ու պղպեղ, դարձեալ եփիր. իսկ ածելիս՝ վրէն համեմ ցանիր։

69. ՍԵՐԿԵՆԼՈՎ ՄԻՍ. 2 գրգ. ոչխարի չաղ միսը կտրտիր, լուա և ածա պղնձի մէջ, վրէն բաւական զուր ածա, եփիր, բափը քաշիր. եփելուց յետոյ քամիր, միջից աւելորդ ոսկորները չոկիր։ 4 գլուխ սոխը մանր կտրտած քիշ տապակիր մի գգալ իւղի մէջ։ Այնուհետև միսը և մանր կճպած, մաքրած և կտրտած 4 գրգ. սերկեփիր ածա սոխի մէջ, մսաշուրն էլ վրէն, քիշ

էլ աղ և եփիր մինչև որ սերկեխը բոլորովին
փափկի:

70. ԳԱՌԱՆ ՄՍՈՎ ՀԽՐԹՄԱՅ: 2 գրվ.
գառան միսը պէտք է կտրտել, լուանալ, ածել
պղնձի մէջ, վրէն այնքան ջուր ածել, որ միսը
ծածկէ, եփել և քափը քաշել և քամել: 4 գը-
լուս սոխը մանր կտրտած, գառան մսի դմակի
հետ տապակել և վրէն ածել քափը քաշած
միսն ու մսաջուրը, զաֆուան, աղ ու քիչ պլղ-
պեղ անել և մի քիչ եփել: ճաշից առաջ 4
ձուի գեղնուցը լաւ հարելով խորը ամանի մէջ
պէտք է ածել վրէն 2 գդալ սպիտակ քացախ
ու խառնել. յետոյ պղինձը կրակից վերցնելով
մէջը ածա ձուն ու քացախը, շարունակ
խառնելով, որ ձուն չկտրուի: Ամանների վերայ
հանելիս վրէն մանր կտրտած տարխուն են
անում:

71. ՀԱՒԻ ՀԽՐԹՄԱՅ: Միմնոյն ձեռվ է
եփւում, ինչպէս գառան մսի չմրժման. միայն
սոխը փոխանակ դմակի՝ տապակում են իւղով:

72. ՔԻՒՖԹԱՅ-ԲՈԶԲԱՅ: 3 գրվ. ոչխարի
կամ գառան փափուկ ու չաղ մսերը ջոկիր,
կտրտիր և լաւ ծեծիր: Ոսկրոտ մսերն էլ ե-
փիր ու քափը քաշիր և քամիր: Ծեծած մսի
հետ լաւ ծեծիր $\frac{1}{2}$ գրվ. մաքրած սոխը, յե-
տոյ հետը խառնիր 2 ձու, աղ ու պղպեղ. այդ

պատրաստ միսը մանր կլորացրու աղած
բրնձի մէջ և դարսիր պղնձի մէջ, վրէն լցրու
քամած մսաջուրն ու եփիր. եփելու ժամանակ
աւելցրու քիչ զաֆուան, տարխուն, համեմ և
ով ցանկանում է մի քիչ էլ բրինձ:

Ծեծած բրինձն այսպէս են պատրաստում.
բրինձը լուանում են, փռում են որ չորանայ
և յետոյ ծեծում են կամ աղում:

73. ԲՐՆՉՈՎ ԱՐԳԱՆԱԿ (ՃՈՐՎԱՅ): Մի
վառեկը չորս կտոր արա, լուա, դիր պղնձի
մէջ, աղ արա, 6 բաժակ ջուր ածա, մի գի-
նու բաժակ էլ բրինձ. եթէ վառեկը շատ լրար
է մի սեղանի գդալ էլ իւղ արա և եփիր մին-
չի նոր բրինձը լաւ եփուի և մի քիչ շիրայ
թողնի:

74. ԿԱԹԱՆՈՎ ԵՒ ՄԱՆՆԱՑԱ ԿՐՈՒՊՈՎ ԱՐ-
ԳԱՆԱԿ: 6 բաժակ կաթը եռցրու, մէջն ածա
1 դինու բաժակ մաննայա կրուպա, եփիր,
լաւ խառնելով որ կոշտեր չմնայ և պղնձից
ածելուց յետոյ մէջը աղ արա:

75. ՀԻՒԱՆԴԻ ՄՍԱԶՈՒՐ: 2 գրվ. փափուկ
և ճարպից մաքրած հում միսը մանր կտրտե-
լով ածում են շշի մէջ, բերանը խցանով պինդ
փակում և չորով կապում և դնելով գոլ ջրով վի
պղնձի մէջ՝ եփ են տալիս այնքան, մինչև որ
պղնձի մէջ արգանակ կազմուի: Յետոյ զգուշու-
շշի մէջ արգանակ կազմուի:

թեամբ հանում են, բերանը բաց անում և մսա-
ջուրը քամում։ Կարելի է այս ձեռվ մսաջուր
պատրաստել ամեն տեսակ մօից։

76. ԽՍԿԱԿԱՆ ԲՈՒԼՔՕՆ։ 2 գրվ. միսը,
10 բաժակ ջուր, մի քիչ կտրտած գաղար,
արմտիքներ, 2 զլուխ չկճպած, խորոված և
միջից կիսած սոխ, դափնի տերև, բահարի,
միասին պէտք է լաւ եփել. մի կտոր շարար
այրելով պլիտի վերայ՝ գցել մէջը գոյն տալու
համար։ Պարզացնելու համար՝ մի կտոր միս
պէտք է ծեծել և խառնել 2 ձուի հետ, բու-
լիօնի միսը երբ լաւ եփուի՝ մսերը պէտք է
հանել և մէջը ածել ձուի խառնուրդը ու կա-
մաց կամաց եփել մինչև ճաշ։ Ճաշից առաջ
մսաջուրը պէտք է բամել մարուր անձեռոցի
մէջ։

77. ԱՐՄՏԻ-ԲՈՎ ԱՐԳԱԿԱԿ։ Եփիր մսա-
ջուր № 37-ի պէս։ Պղնձի մէջ կտրտիր սոխ,
գաղար, արմտիք, բաւական խւլ արա, քիչ
էլ մսաջուր և լաւ տապակիր. աւելցրու մէջը
մի քիչ ալիւր, այնրան որ չթանձրանայ։ Յե-
տոյ մէջը ածա մսաջրից 6 բաժակ, խառ-
նիր, որ կոշտեր չմնայ, մէջը վարունդ կտրտիր։
Եսկ սեղան տանելիս՝ խառնիր 1 բաժակ թը-
թուասեր. եթէ բաւական թթու չմնի մի
քիչ էլ լիմոնի աղ արա։

2. ՀԿԱՆ ԱՐԳԱԿԱԿՆԵՐ

78. ՕՐԱԳՈՒԿԻ ԱՐԳԱԿԱԿ։ Օրագուկը կը-
տրտելով մի բանի անգամ լաւ լուա, սոխն էլ
տափակ տափակ կտրտիր. պղնձի մէջ դարսիր
մի կարգ օրագուկ, վրէն մի կարգ սոխ, աղ ու
պղպեղ, նորից օրագուկ, նորից սոխ ու պղպեղ
մինչև վերշանայ, վրէն քիչ ջուր ածա մինչև
ծածկէ և դիր կրակի վերայ, քափը քաշիր և
եփիր, ածելով մէջը թթած զափուան, իոկ հա-
նելիս ով ցանկանայ կտրտած համեմ։

79. ԱՍԷՏՐԻՆԵ ՁԿԱՆՈՎ ԱՐԳԱԿԱԿ։ 1 գը-
գալ իւղի մէջ տապակիր 1 զլուխ սոխ, 2 բա-
ժակ քամած թթու կաղամբ, ջուր ածա վրէն,
աւելցրու 2 դափնի տերև, պղպեղ, մի գդալ
էլ ալիւր և եռցրու, յետոյ լցրու մէջը 2 գրվ.
աղ արած ու կտրտած ձուկ և եփիր մինչև
կըպատրաստուի։ Հանելիս կանաչի արա։ Սորա
համար գործ է գրւում թէ թարմ, թէ աղած
և թէ չորացրած ձուկը։

3. ՊԱՍՈՒԱՅՑ

80. Ա. ԱՓՍԱԿԱԿՆԵՐ։ 2 գրվ. կճպած և
կտրտած պոմադոր, 3 զլուխ մանր կտրտած
սոխ, 10 պորինճան կճպած և լայնութեան վե-
րայ կտրտած, քիչ համեմ, ոեհան, պրաս, բոլո-

բը կտրտած, մի գինու բաժակ ջուր, քիչ աղ
և պղպեղ, և հատ գետնախնձոր կճպած ու կը-
տրտած և $\frac{1}{2}$ գինու բաժակ ձեթ միասին
պէտք է ածել պղնձի մէջ, ծածկել և խր գո-
լորշու մէջ եփել մինչև լաւ կեփուի:

81. ՍԻՍԵՐԻ ԱՐԳԱՆԱԿ: 1 գրվ. սիսեռը
զիշերը դրջիր եռցրած ջրում. միւս առաւօտ
լուա, պղնձի մէջ ածա ջուր, քիչ աղ և եփեր
մինչև մէջը հում չմնայ: Յետոյ ուրիշ ամանի
մէջ 4 գլուխ սոխ կտրտիր և 4 գդալ ձեթի մէջ
տապակիր, ածա սորա մէջ եփած սիսեռը, 5
բաժակ իւր ջրից, քիչ զաֆուան, կտրտած կա-
նաչեղէն, 1 գդալ սպիտակ ալիւր, իսկ ով ցան-
կանում է՝ ալիւրի փոխարէն բրինձ և մի քիչ
էլ եփեր ու բաւական է:

82. ՍՈՒՆԿԻ ԱՐԳԱՆԱԿ: $\frac{1}{4}$ գրվ. չոր սունկը
զիշերը դռչիր եռցրած ջրի մէջ. միւս առա-
ւօտը ջրից հանիր և կեղտից մաքրիր ու մանր
կտրտիր: Մի ափսէով մանր կտրտած սոխը
տապակիր $\frac{1}{4}$ գրվ. ձեթի մէջ. մէջը ածա կը-
տրտած սունկը և էլի մի քիչ տապակիր. յետոյ
սունկի բամած ջուրը վրէն ածա չորս խորը
ափսէի չափ. արա մէջը աղ, $\frac{1}{2}$ գինու բաժակ
հում բրինձ, զաֆուան, կտրտած կանաչեղէն և
եփեր, մինչև որ բրինձը եփուի:

Գ. ՄԱՍԱՐ

ՃԾՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

1. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ

83. Եթէ արգանակը տաւարի մսով է
եփուում՝ եփած միսը մօտ է՝ բերում իրեն
երկրորդ տեսակ կերակուր: Մսի հետ բերում
են մանանեխ և քացախ:

84. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍԸ ՏԱՊԱԿԱԾ
ՍՈՒՆԿՈՎ. (անս № 12):

85. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍԸ ԳԵՏՆԱԽՆՉՈ-
ՐՈՎ ԵՒ ՄՍԱԶՔԻ ՍՈՍԻԽՈՎ: Գետնախնձորը մաք-
րիր, լուա, մանր կտրտիր, աղ արած ջուր ա-
ծա վրէն, եփեր, ջուրը արգանակի մէջ ածա,
գետնախնձորին մի գդալ իւկ, մի գդալ մանր
կտրտած մաղղանոս և սամիթ, մի բաժակ չաղ
մսաջուր արա և մէջն ածա եփած տաւարի մի-
սը և խուփը ծածկելով՝ եփիր:

86. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍԸ ԿԱԹՆԻ ՍՈՍ-
ԽՈՎ (№ 139):

87. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻԱՅ ԵՓԱԾ ԳԱԶԱ-
ՐՈՎ: 4—8 գազար մարրիր, մանր կտրտիր,
լուս, եփիր մսաշրի մէջ, հանիր ափսէի վերայ,
վրէն արա իւղի մէջ տապակած՝ չոր ֆշրտած
բուլիի:

2. ՏԱՊԱԿԱԾ ՈՒ ԽՈՐՈՎԱԾ

88. ՏԱՊԱԿԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ (դր. Ման.):
Նախընթաց օրը 2 գրվ. տաւարի փափուկ մի-
ուլ փայտէ մուրճով լաւ ջարգիր, վրէն $\frac{1}{2}$ թէ-
յի գգալ աղ և քիչ էլ պղպեղ ածա և քրեղա-
նի մէջ դնելով ծածկիր և թող այդպէս մինչև
միւս օրը: Միւս օրը ճաշից $\frac{1}{2}$ ժամ առաջ
միսը դիր թաւի մէջ, աւելցրու 2 գգալ իւղ և
տապակիր մինչև որ միսը կարմրի. յետոյ մի
քիչ ջուրածա թաւի մէջ և տապակածից ծորած
ջրից շուտ շուտ վրէն ածա: 1 գրվ. գետնա-
խնձորը լուս, եփիր և կճպիր. ճաշից առաջ
ածա թաւի մէջ և շուտ շուտ խառնելով տա-
պակիր և մօտ բեր տապակածի հետ:

Բայց գետնախնձորից կարելի է հետը
գործ դնել ձմեռը՝ թթու խիար կամ թթու
կաղամբ, իսկ ամառը թարմ աղցան (салաթ):

89. ՏԱՊԱԿԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ: Միւնոյնը
կարելի է շինել նաև նոյն օրը, առանց միսը
մի գիշեր պահելու:

90. ԽՈՐՈՎԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ: Մուկուց կամ
փափուկ մսից չաղութիւնները պէտք է հանել,
կտրտել, աղ, պղպեղ և կտրտած սոխ անել ա-
ռաւօտը և պահել բըեղանի մէջ. ճաշին շարե-
լով մաքուր շամփուրների վերայ պէտք է խո-
րովել շուռ տալով մինչև կարմրելը: Խորովա-
ծի հետ գործ են դնում թթու խիար կամ
աղցան:

91. ԽՈՐՈՎԱԾԻ ՄԻ ՈՒՐԻՇ ՏԵՍԱԿԸ: Մու-
կու կամ փափուկ մսի զղերը հանեցէք, աղ,
պղպեղ արէք և խորովեցէք շամփուրի վերայ:
Յետոյ սոխ կտրտեցէք պղնձի մէջ, խորովածը
կտրտեցէք նորա մէջ և դրէք կրակի մօտ մին-
չև ճաշելը:

92. ՏԱՊԱԿԱԾ ՀՈՐԹԻ ՄԻՍ: Հորթի ե-
տևի մսից երիկամունքով և հատ կողով լուա-
ցէք, մի քանի ժամ աղաշրի մէջ թողէք և յե-
տոյ հանեցէք. դրէք թաւի մէջ մի քիչ իւղ և
մի երկու գգալ էլ ջուր աւելցնելով մէջը տա-
պակեցէք, շուտ շուտ շուռ տալով և նորանից
դուրս եկած հիւթը ածեցէք վրէն, որ հիւթա-
լի և փափուկ լինի: 4 կամ 5 գրվ. հորթի մի-
ուլ պէտք է $\frac{3}{4}$ ժամ տապակել. հետը կարելի
է տապակել մաքրած և կտրտած գետնախն-
ձոր. պէտք է ուտել որևէ աղցանով:

93. ԵՓԱԾ ՀՈՐԹԻ ՄԻՍ ՍՊԻՏԱԿ ՍԸՆԻ-

ՍՈՎ: 2 գրվ. հորթի փափուկ միսը պէտք է կտրտել, լուանալ, մի անգամ եփ տալ, բափը բաշել, հանել, սառը ջրում անցկացնել, աղ անել, վրէն իւր մսաջուրը ածել, գաղար և սոխ աւելցնել և եփել այնքան մինչև որ փափկի, բայց շրբրուի. $\frac{1}{2}$ բաժակ ալիւրը տապակիր մի դպալ իւղի մէջ, բայց արա 2–3 բաժակ հորթի մսաջրի մէջ, եփիր, մէջն աւելցրու $\frac{1}{2}$ բաժակ թթուասեր կամ մի բաժակ կաթը. և այս սոռսի մէջ դիր մսաջրի մէջ եփած սետնախնձորն ու կտրտած հորթի միսը, մէկ էլ եփ տուր, կանաչի արա և պատրաստ է:

94. ՀՈՐԹԻ ԵՒ ՏԱԿԱՐԻ ԼԵԶՈՒ: Լեզուն
պէտք է զնել տաք ջրի մէջ, կաշին պլոկել,
լուանալ և յետոյ եփել աղ արած ջրի մէջ մինչև
որ փափկի, յետոյ հանել. և ուտելու է գա-
րոխով № 15:

95. ՏԱՊԱԿԱԾ ԳԱՌԱՆ ՄԻՍ: Գառան
փափուկ միսը կամ բուգը լուա, աղ արա,
դիր թաւի մէջ, վրէն 2–3 դպալ ջուր ածա և
խորովիր հնոցի մէջ, շուտ շուտ ածելով վրէն
իրանից թողած ջուրը: Այս միննոյն սոռսի
մէջ միտժամանակ կարելի է և մի բանի գլուխ
սոխ էլ խորովիր սաղ սաղ և ով սիրում է
նոյնապէս սխտոր:

Տապակած գառան հետ գործ են դնում
աղցան և թթու խիար:

96. ՏԱՊԱԿԱԾ ՀՈՐԹԻ ՄԻՍ ԿԱՄ ՏԱԿԱՐԻ
ՍՈՒԿԻ ՉՈՒՈՎ ԵՒ ՍՈՒԽԱՐԻՈՎ (Wiener schnitzel):
Փափուկ միսը տափակ կտրտիր, փայտէ մուր-
ճով ջարդիր և աղ արա: Պէտք է ձուն քիչ
հարել, մսի կտորները թաթախել ձուի մէջ,
ածել վրէն ծեծած սուխարի և իւղի մէջ տա-
պակել երկու կողմից:

97. ՏԱՊԱԿԱԾ ՎԱՌԵԿ ՉՈՒՈՎ: Վառեկը
լաւ մաքրելուց յետոյ մի անգամ եփ տուէր, հանե-
ցէր, աղ արէր, թաթախեցէր հարած ձուի և
յետոյ ծեծած պաքումատի մէջ և իւղը թաւի
մէջ տաքացնելով տապակեցէր նորա մէջ մին-
չև որ լաւ կարմրի. խորովելիս շուտ շուտ վրէն
ածեցէր իր հիւթից, որ լաւ կարմրի:

98. ԲԻՖԵՏԻՔ (Համբուրգեան): Տաւարի
փափուկ միսը կամ սուկին լուացէր, կտրտե-
ցէր և փայտի մուրճով ջարդեցէր, այնպէս որ
շրբրուի. յետոյ տապակեցէր իւղի մէջ. բանի
կտոր միս լինի՝ այնքան էլ ձու ամբողջ իւղի
մէջ տապակեցէր, և միսը հանելուց յետոյ՝ ա-
մեն մէկ կտորի վերայ՝ մի մի ձու դրէր. վրէն
էլ ածեցէր մսի հիւթը, մէջը քիչ մսաջուր խառ-
նած:

99. ՈՍԿՐՈՎ ԿԱՏԼԵՏ: Վերցրէր ոչխարի

ետեի կողքերից, որի վերայ փափուկ միս էլ կայ. մէջէմէջ կտրտեցէք ամեն ոսկըն առանձին. ամեն մի ոսկըքերեցէք այնպէս որ միսը հաւաքուի մէկ ծայրին. միսը ջարդեցէք. աղ, պղպեղ և ձու արէք ու խաւնեցէք. միսը կատէտի ձեռվ ամրացրէք ոսկորի վերայ մինչեւ ոսկը կէսը, թաթախեցէք ծեծած սուխարու մէջ և դանակով ուղղեցէք ու իւղի մէջ երկու երեսն էլ տապակեցէք: Սորա հետ գործ են դնում հետեւալ սուսը. — զետնախնձորն եփում են, կճպում և մաղի մէջ անցկացնում, յետոյ ածում պղնձի մէջ մի քիչ իւղ, քիչ շաքար, կաթ և խառնում մինչև քիչ թանձրանայ ու ածում կատէտի վերայ իւր հիւթով:

100. ՀՈՐԹՈՒ ՈՏ ՈՒ ԳԼՈՒԽԸ ՉՈՒՈՎ ԵՒ ՍՈՒԽԱՐԻՈՎ ՏԱՊԱԿԱԾ: Ոտ ու գլուխը պէտք է լաւ եփել, ոսկորները միջից ջոկել, միսը խառնած ձուի մէջ թաթախել, ածել վրէն ծեծած սուխարի և իւղի մէջ տապակել:

101. ԽՈՐՈՎԱԾ ԽՈՃԱԿՈՐ: Խոճկորը պէտք է լաւ մաքրել, մի քանի կտոր անել. ներսից ու գրսից աղ անել, և դնել թաւի մէջ, վրէն 2—3 գդալ ջուր ածել, լցնել վրէն $\frac{1}{8}$ գրի. իւղ և մէկ ժամի շափ փուռի մէջ խորովել, իր հիւթը ածելով վրէն:

102. ԽՈԶԻ ԽՈՐՈՎԱԾ: Խորովածի համար

գործ են դնում խողի կողքեր և սուկի. և խորովում են շամփուրի վերայ ոչխարի մսի նման:

103. ԽՈՐՈՎԱԾ ՀՆԴՈՒՀԱՒ, ՀՆԴՈՒՀԱՎԱՐ լաւ մաքրիր, փորոտիքը հանիր և վրէն քիչ իւղ քսելով դիր թաւի մէջ ու խորովիր փոան մէջ: Հետը գործ են դնում թթու խիար կամ աղցան:

104. ԽՈՐՈՎԱԾ ՎԱՌԵԿ: Վառեկը լաւ մաքրելով անց են կացնում շամփրի վերայ. վրէն քսում են մի քիչ իւղ և խորովում կրակի վերայ, շարունակ շամփուրը պտոյտ տալով. խորովելիս քիչ իւղ են քսում դարձեալ, որ լաւ կարմրի: Հետը գործ են դնում զանազան աղցաններ:

105. ՏԱՊԱԿԱԾ ՎԱՌԵԿ: Վառեկը պէտք է լաւ մաքրել, փորոտիքը հանել և լուսնալ, վրէն աղ անել և թաւի մէջ քիչ իւղ ածելով՝ երկու կողմից տապակել մինչև կարմրելը: Մօտ բերելիս տապակած վառեկի վրայ ածում են հետեւալ սուսը. — մի դինու բաժակի շափ մսաջուրը ածել թաւի մէջ, մէջը ածել 1 ծեծած սուխար և վառեկի մնացած սոսւսը, այս բոլորը պէտք է մի քանի բոպէ եփել և ածել վառեկի վերայ:

106. ՏԱՊԱԿԱԾ ՍԱԳ: Սագը մաքրեցէք, փորոտիքը հանեցէք, աւելորդ ճարպը հեռա-

ցրէր, ներսից ու գրսից լաւ աղ արէր, թիշ էլ պղպեղ. զրէր թաւի մէջ, վրէն լցրէր 2—3 դրալ ջուր և տապակեցէր. հետզհետէ լցնելով վրէն իրանից ծորած հիւթը: Կարելի է հետը տապակել նաև մի քանի հատ սոխ:

Տապակած սաղի հետ կարելի է գործ զը. նել՝ սաղի հետ եփած մանը կտրտած խնձոր:

107. ՏԱՊԱԿԱԾ ԲՍԴԻ: Բաղը պէտք է մաքրել, աղ անել, վրէն մի թիշ ալիւր, 2 դրալ մսաջուր ածել և թաւի մէջ տապակել, տապակելիս իրանից դուրս եկած սոուսը ածելով վրբէն: Սորա հետ կարելի է գործ դնել տապակած կարտօֆիլ և աղցան:

108. ՎԱՅՐԻ ԹՌՉՈՒՆԵՐ, օրինակ բաղ, կարաւ, փայտմորիկ (տերերա), վայրի աքալաղ և այն: Պէտք է փետրել, մաքրել, փորոտիրը հանել, լուանալ, աղ ու թիշ պղպեղ անել, և դնելով թաւի մէջ ու վրէն 2—3 դրալ ջուր ու մի դրալ իւղ անելով տապակել ամեն կողմից, հետը իր սոուսից վրէն ածելով: Այս սոուսի մէջ դարսելու է մի քանի հատ մաքրած պետնախնձոր, որ խորովուի: Իսկ առանձին էլ մօտ են բերում որեէ աղցան:

109. ՀԻՒՆՔԵԱՐԳԻՑԵՆՏԻ (արքայավայիլ): Մե պորինձանը առանց կճպելու կրակի վերայ խորովելու է. յետոյ կճպել, $\frac{1}{4}$ ժամ դնել կա-

թի մէջ, կաթը նորանից քամել առանց սեղմելու: Քիչ պանիր զերելով ածել պորինձանի վերայ: Ոչխարի միսը մանը կտրտած և մանը սովոր իւղի մէջ տապակած՝ պոմադորը քամել վրէն և եփել թիշ ջրի հետ. յետոյ պորինձանը դնել սկսուղի վերայ, միսն էլ վրէն և այնպէս մօտ տանել:

110. ԱՆԳԻՔԱԿԱՆ ՏԱՊԱԿԱԾ: Վերցրէր 2 գրվ. սուկի կամ փափուկ միս, պղնձի մէջ դրէր $\frac{1}{8}$ գրվ. իւղ և միսը ամբողջ դրէր մէջն ու տապակեցէր շուռ տալով, մինչև լաւ կարմրի: Յետոյ միսը հանեցէր և մէջը լցրէր կրտրտած սոխ ու գաղար ու տապակեցէր, որից յետոյ դրէր նորա մէջ նաև միսը և դարձեալ տապակեցէր ածելով վրէն մի շերեփ մսաջուր: Կտրտեցէր 2 գրվ. գետնախնձորը և աւելցրէր նորա վերայ և կամաց կամաց միասին տապակեցէր: Երբ կհանէր՝ միսը կտրտեցէր և հիւթն էլ վրէն ածեցէր:

111. ԲՈՁԲԻՖ: 2 գրվ. փափուկ մսին աղ արէր և դրէր պղնձի մէջ. մէջն աւելցրէր՝ 3 դլուխ սոխ ամեն մէկը շորս մամն արած, մի քանի գափնի տերև, մի գաղար կտրտած, մի քանի հատիկ անգլիական պղպեղ (բահար), կէս բաժակ սպիտակ զինի, մի թիշ իւղ. այս բոլորը միասին լաւ տապակեցէր մինչև որ կարմրի: Երբ

հանէր՝ կտրտեցէր և իր ջուրն էլ ածեցէր վրէն։
 112. ՀԱՐԻ ԿԱՄ ՎԱՌԵԿԻ ՍՈՌԻՍ։ Մի վա-
 ռեկ մաքրիր և եփիր։ Մի մեծ՝ իւղով բուլզու
 երեսը կճպելով՝ մնացածը դիր մի կլոր սկուտ-
 ղի վերայ։ Եփած հաւը կտրտելով դարսիր վրէն
 և ածա դորա վերայ հետեւեալ սօռւսը. — պլնձի
 մէջ պէտք է ածել բաւական իւղ, քիչ ալիւր
 և եփել. վրէն ածել երկու շերեփ մսաջուր և
 խառնել, որ ալիւրից կոշտեր չգոյանայ. Եփել
 այնքան, որ ոչ շատ թանձր լինի և ոչ շատ էլ
 ջրալի. այդ սօռւսի մէջ ածել վառեկի թոքն ու
 քարճիկը մանր կտրտած և վրէն քամել 2 լի-
 մոն։ Այնուհետև մի խոր ամանի մէջ հարիր 2
 ձուի դեղնուց և զգուշութեամբ խառնիր սօռւսի
 մէջ, որ չկտրուի։ Այս սօռւսը պէտք է ածել
 սկուտղի վերայ պատրաստած վառեկի վերայ։

113. ԼՈՒԾՅ ՔԵԱԲԱԲ. 2 գրվ. ոչխարի
 փափուկ ու շաղ միսը ծեծիր 4 գլուխ մանր
 կտրտած սոխի հետ. հետը խառնիր աղ և քիչ
 պղպեղ, 2 ձու, մի կտոր էլ թրջած ու քամած;
 բուլզի. շամփուրը տարացրու, այդ մսից կըպ-
 ցրու վրէն և խորովիր կրակի վերայ։ Մկուտ-
 ղի վերայ հանելիս՝ վրէն անում են ծեծած
 սմաղ։

114. ՈՉԽԱԲԻ ԿԱՄ ԽՈԶԻ ՂԱՌԵՄԱՅ. 2
 գրվ. շաղ միսը կտրտիր, լուա, ածա պղնձի

մէջ, աւելցրու մի ափսէ լիքը կտրտած սոխ և
 $\frac{1}{2}$ բաժակ ջուր ու տապակիր մինչև սոխը
 լաւ կարմիր։

3. Ա Ղ Յ Ա Ն Ն Ե Բ

Տապակած մսի, թռչունների և ձկների
 հետ զործ են դնում հետեւեալ աղցանները. —

115. ԹԱՐՄ ԿԱՎԱՄՄԻ ԷԴՑԱՆ. Թարմ կա-
 կամբը լաւ մաքրիր, մանր կտրտիր, ածա մաղի
 վերայ, վրէն եռցրած ջուր լցրու և երբ լաւ
 քամուի՝ ածա աղցանի մէջ, աղ արա, վրէն ա-
 ւելացրու 2 գդալ պրովանսի ձէթ, 2 գդալ էլ
 քացախ և խառնիր։

116. ՍԱԼՎԱՏ (խաւարտ)։ Սալատը լաւ մաք-
 րիր, փտած տերինները հեռացրու, լաւ լուա,
 կտրտիր, քիչ աղ արա։ Մէկ ձուի պինդ եփած
 դեղնուց և ով ուզում է երկու գդալ էլ շաքա-
 րաւազ, տրորիր ամանի մէջ, 2 գդալ թարմ
 թթուասեր խառնիր և մի գդալ էլ քացախ,
 խառնիր, սալաթն էլ հետը և տար ճաշի։ Կա-
 րելի է աւելցնել և բարակ բարակ կտրտած
 վարունգ։

Պաս օրերին ձռւի և թթուասերի փոխա-
 նակ պէտք է աւելցնել 1 գդալ պրովանսի ձէթ։

117. ԹԱՐՄ ԿԱՐՈՒՆԳ. 2—3 վարունգ

կճպիր, բարակ բարակ կտրտիր, աղ արա, մի ժամից յետոյ իրանից թողած ջուրը դէն ածա, 2 գդալ պրօվանսի ձէթ, 2 գդալ քացախ, քիչ էլ պղպեղ և սամիթ արա ու խառնիր:

118. ՃԱՎՆԴԵՂ (Ճարխալ): Մի քանի հատ ճակնդեղ պէտք է խորովել, մարլել, կտրտել, ածել ամանի մէջ, վրէն աղ, պղպեղ, ձէթ, քացախ և կանաչի անել ու լաւ խառնել:

119. ԽՆՉԱՔ: 4—8 թթուառն խնձոր կճպիր, կտրտիր, միջուկը հանիր, գարսիր պլզզնձի մէջ, աւելցրու մի գդալ շարաբաւազ, 2—3 գդալ ջուր, $\frac{1}{4}$ գդալ աղած գարշն և խուփը ծածկելով այնքան եփիր որ խնձորը փափկի, յետոյ վրէն ածա 2 գդալ տապակածի սոսւից:

120. ՊԱՐԶ ՏԵՍԱԿ ՍԱԼԱՏ: Սալաթը լուանալ, կտրտել, աղ, շարար, քացախ անել և խառնել:

4. ՓԼԱՒԵՐ

121. ՔԱՇՈՎԻ: 1 գրվ. բրինձը ընտրիր և մի քանի անգամ լուա: Բրինձը մի ամանով չափիր և ինչպան որ բրինձն է՝ 2 այնքան ջուր արա, $\frac{1}{4}$ գրվ. իւղ և մի քիչ աղ անելով եփիր, մինչեւ որ ջուրը ցամաքի. յետոյ մեծ

գդալով հաւաքիր պղնձի մէջ տեղը, մի սինի ծածկիր պղնձի վերայ և շարունակիր եփել կարճ ժամանակ. այդ միջոցին մի երկու անգամ սինին վերցրու, որ հաւաքուած գոլորշին թափուի (դամը քաշուի):

122. ՔԱՄՈՎԻ ՓԼԱՎԻ: 1 գրվ. բրինձը ընտրիր, 3 անգամ լուա և գոլ ջրում դրջիր $\frac{3}{4}$ ժամ. բաւականաշափ ջուր ածա պղնձի մէջ և եռ տուր. բրինձը ածա մէջը. երբ բրինձը մի անգամ եռ գայ՝ արա մէջը այնքան աղ, որ ջուրը մի քիչ աղի լինի. մի քանի անգամ էլ եփ տալուց յետոյ պէտք է մի քանի հատիկ բրինձ հանել և տեսնել, եփուած է թէչէ. երբ բրինձը բրդրուած չէ, բայց եփուած է՝ այն ժամանակ պղինձը շուռ տուր փլաւ բամիչի մէջ. պղինձը ոլողելով սառը ջրով՝ այդ ջուրն էլ ածա չլաւի (եփած բրինձի) վերայ: Երբ ջուրը լաւ քամուի՝ չլաւը ածա դարձեալ պղնձի մէջ և մէջ տեղը հաւաքիր ու ածա վրէն ուրիշ փորք պղնձի մէջ տաքացրած $\frac{1}{2}$ գրվ. իւղ. պղնձի վերայ ծածկիր սինին և թոյլ կրակի վերայ դիր կարճ ժամանակ և դամը քաշիր, ինչպէս № 121 քաշովի Փլաւի ժամանակի:

123. ՓԼԱՎԻ ՉՈՒՈՎԻ: Փլաւը շինւում է մինոյն ձեռով, ինչպէս որ գրուած է № 122 ում

մինչև բրնձի քամելը. երբ շաւը պատրաստ է, հարիր Յ ձու, պղնձի մէջ թիշ իւղ տարացրու, ձուի մէջը մի քանի գլազ շաւ խառնիր և լցրու իւղի մէջ ու տարածիր պղնձի տակը ամբողջապէս. յետոյ շաւը ածա վրէն, հաւաքիր մէջտեղը և վրէն ածա $\frac{1}{2}$ գրվ. տարացրած իւղ և գամ րաշիր:

124. ԳԱԾՈՒԱՆ ՄՇՈՎ ԿԱՄ ՎԱՌԵԿՈՒ ՓԼԱՒ: Փլաւը պատրաստում է № 122-ի պէս: Գառան միսը կամ վառեկը մանր կտրտած՝ պէտք է տապակել և դարսել փլաւի մէջտեղը, վրէն իւղ ածել և այնպէս դամ քաշել:

125. ՓԼԱՒԻ ՎԵՐԱՅ ԳՈՐԾԱԾՈՒՈՂ ՔԱՎՑ-ՔԵՎՆԵՐ: Քամովի պարզ փլաւի վերայ գործ են գնւում:

1, ալուբալին կորիզները հանած և շաքարի մէջ եփած:

2, շորը նոյնպէս կորիզները հանած և շաքարի մէջ եփած:

3, հոնը, նոյնպէս պատրաստած.

4, դամբուլը նոյնպէս պատրաստած.

126. ՂԱԲԼՈՒ-ՓԼԱՒ: Փլաւը պատրաստիր № 122-ի եղանակով: Խակ դարլուն շինուում է հետևեալ կերպով. 1 գրվ. քիշմիշ կոթերից և կեղտերից մաքրում են և լաւ լուանում: Լուանում են նոյնպէս 1 գրվ. մաքրած մուխունդը,

ածում են եռցրած զբի մէջ և առանց աղի եփում, մինչև որ փափկի, բայց չըրքրուի. յետոյ ջուրը քամում են փլաւ-քամիչի մէջ, $\frac{1}{2}$ գրվ. իւղը հալելով պղնձի մէջ՝ մէջը պէտք է ածել լուացած քիշմիշն ու եփած մուխունդը. դնել կրակի վերայ և խառնել մինչև քիշ կեփուի, բայց չպիտի այրել, ապա՝ աւելցնել մէջը¹ 1 գրվ. շաքարաւագ և թոյլ կրակի վերայ մի փոքր էլ եփել: Փլաւը երբ կհանէք սկուտղի վերայ դարլուն էլ պէտք է ածել երեսին:

127. ԿԱԹԱԿՍՊԱՍ: 1 գրվ. բրինձը մաքրելով կեղտից՝ լաւ լուած մի բանի անդամ. պըղնձի մէջ ածա 5 բաժակ կաթ, Յ բաժակ էլ ջուր և բրինձ ու եփիր. երբ կաթը ցամաքի՝ աւելցրու դարձեալ 5 բաժակ կաթ և $\frac{1}{2}$ գրվ. շաքարաւագ ու լաւ եփիր մինչև թանձրանալը: Հանելուց յետոյ՝ վրէն շաղ տուր ծեծած շաքար, դարչին և զափուան:

128. ՇԻԼԱՓԼԱՒ: 2 գրվ. ոչխարի միս կամ մի հաւ պէտք է կտրտել և լուանալ ու ածել պղնձի մէջ, վրէն աւելցնել այնքան ջուր որ մսից մի բանի մատ բարձր կանգնի, եփել քափշերով, մսաջուրը բամել, մսի աւելորդ ոսկորները դէն ածել, մսաջուրը, միսը և $1\frac{1}{2}$ գրվ. լուացած բրինձը ածել պղնձի մէջ, աղ,

պզպեղ և զիրա անել և դնելով կրակի վերայ
թողնել որ թանձրանայ:

129. ՀԱՐԻՍԱ: Հեղուհաւը կամ ոչխարի
փափուկ և շաղ միսը կտրտեցէք, լուացէք և
լաւ եփեցէք՝ քաֆը քաշելով, այնպէս որ ոս-
կորները մսից ջոկուի. քամեցէք, ոսկորները
մսից ջոկեցէք. մսաջումն ու միսը ածեցէք պը-
ղնձի մէջ, մէջը ածեցէք մարրած և լուացած
ձաւարը և շարունակեցէք եփել. երբ ջուրը ցա-
մաքի՝ վրէն տւելցրէք եռցրած ջուր. եփելիս
քաֆկիրով պէտք է լաւ հարել, որ մածուցիկ
դառնայ: Եփելուց յետոյ աղ արէք: Մանր կտրր-
տած սոխը տապակելով իւզի մէջ՝ ածեցէք հարի-
սի վերայ ամանների վերայ հանելուց յետոյ,
հետն էլ շաքար և դարչին:

Հարիսան եփել սկսում են մի օր առաջ:

ՀԿՆԵՂԻՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ:

130. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԿԱՄ ԻՇԽԱՆ: Գեղար-
քունին կամ իշխանը մաքուր պէտք է լուանալ,
կտրտել, ածել եփ տուած աղաջրի մէջ և ե-
փել. առաջ գլուխն են գցում ջրի մէջ, որով-
հետեւ նա տւելի ուշ է եփում:

Գեղարքունու և իշխանի հետ գործ են
դնում ծեծած ընկոյզը քիչ ջրի մէջ բաց արած.

ցանկացողները նաև սխտոր նոյնպէս պատրաս-
տած:

131. ՆՈՐ ՉՈՒԿ. Նոր ձուկը պէտք է մոր-
թել, փորոտիքը հանել և լաւ լուանալ. եթէ
մանր են՝ ամբողջ, իսկ եթէ խոշոր են՝ կարե-
լի է կտրտած եփել: Զուրը պէտք է եռցնել,
ածելով մէջը այնքան աղ, որ մի քիչ աղի լի-
նի ջուրը. ձկները լցնում են մէջը և եփում
մինչև որ աչքի բիբերը սպիտակեն: Դա նշան
է, որ ձուկը եփուած պատրաստ է և իսկոյն
պէտք է հանել:

132. ԼՈՒՅ. Լույոն եփում են միեւնոյն
տեսակ, ինչպէս նոր ձուկը:

Հետը բերում են կտրտած համեմ քացա-
խի հետ խառը:

133. ԶՈՒԹԻՒ (СЕВРИОГА): Թարմ զութւ-
խին պէտք է լաւ բերել, ոսկորները մաքրել և
այնքան լուանալ, մինչև որ կաշին բոլորովին
սպիտակի, յետոյ կտրտել ու եփել աղաջրի մէջ:
Եթէ զութխին աղի է՝ առաջ 24 ժամ պէտք
է թրչել, ջուրը մի քանի անդամ փոխելով. և
ապա միեւնոյն ձևով եփել: Եթէ իսկոյն ուտելու
համար է՝ վրէն քացախ են լցնում և այնպէս
ուտում. իսկ եթէ պահելու համար է՝ լցնում
են վրէն հետեւալ խառնուրդը. — սպիտակ քա-
ցախ, հետը մի քիչ ձկան ջրից խառնած, բա-

հարի և դափնի տերեւ. միասին եփ տալ, սառ-
ցնել և վրէն ածել մինչև ծածկելը:

134. ԽՈՐՈՎԱԾ ՕՐԱԳՈՒՅ: Օրագուլը պէտք
է լաւ լուանալ, կտրտել և աղ ու բիշ էլ պըդ-
պեղ անել. յետոյ շարել շամփրի վերայ և կրտ-
կի վերայ խորովել մինչև կ'կարմրի:

Օրագուլի հետ գործ են գնում նարշա-
րարի կամ քամած թթու նուռն:

Կարելի է քիչ քացախի մէջ մանր կտրը-
տած սոխը եփել և խորոված օրագուլի վրէն
ածել:

135. ԹԱՐԹ (ճշլցա): Պէտք է տար զրի
մէջ դնել և քերել. յետոյ եռցրած աղաջրի մէջ
ածել դափնի տերեւ, բահար, մի երկու գլուխ
սոխ և քացախ, թարթն էլ մէջը և թող ե-
փուի այնքան, որ չքրբրուի:

Իսկ եթէ ուզում էք պահել՝ եփելուց յե-
տոյ՝ իր ջուրը սառցրէք, շաղութինը դէն
ածէք և ձուկը դարսելով քիլի մէջ՝ ջուրն ու
քացախը ածեցէք վրէն, վրէն էլ դափնի տե-
րեւ և բահար:

136. ՆՈՐ ԶՈՒԿԸ ՏԱՊԱԿԱԾ: Նոր ձկան
փորոտիրը հանիր, լաւ լուա, աղ արա և ա-
ռաջ ձուի ու յետոյ սուխարու մէջ թաթախի-
լով՝ տապակիր իւղի մէջ:

137. ԵՓԱԾ ԹԱՌԱԾ (օսերինա): Թառա-

փը մաքրիր և լաւ լուա, կտրտիր ու ածելով
աղաջրի մէջ՝ եփիր, մի քանի անգամ քափը
քաշելով:

Թառափի հետ գործ են գնում՝ խրէն,
քացախ ու պըռվանսի ձէթ կամ մանանեխ:

138. ԵՓԱԾ ԴՈՇ: Ամբողջ գոշը դիր ա-
մանի մէջ, վրէն գոլ ջուր ածա, մէջը լցրու
երկու բուռը թեփ և թող այդպէս 24 ժամ.
յետոյ հանիր, քերիր ու լուա. դիր տաք ջրի
մէջ և թոյլ կրակի վերայ եփիր, որ չքրբրուի:

ԸՆԴԵՂԵՆ ԵՒ ԱՐՄՏԵՂԵՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

139. ԳԵՏՆԱԽՆՉՈՐԻ ԿԱՏԼԵՏ ԿԱԹՆԵ ՍՈ-
ՈՒՍՈՎ: Գետնախնչորը լուա, մաքրիր, եփիր
աղաջրի մէջ, ջուրը գէն ածա, կճպիր և տրո-
րիր, մի գդալ իւղ արա, մէկ կամ երկու ձու,
 $\frac{1}{4}$ բաժակ կարմրացրած ալիւր և աղ, կատ-
լէտներ շինիր, շաղախիր ալիւրի կամ վշրած
սուխարու մէջ և իւղի մէջ տապակիր: Առա
հետ գործ դիր հետևեալ կաթնէ սօսուը: 2 բա-
ժակ կաթի հետ խառնիր 2 թէյի գդալ ալիւր,
1 գդալ շաբարաւազ և մի քիչ դարչին, դիր
պլիտի վերայ, եփիր և ածա կատլէտի վերայ:
140. ԳԵՏՆԱԽՆՉՈՐԻ ԿԱՏԼԵՏ ՍՈՒՆԿԻ ՍՈ-
ՈՒՍՈՎ: Կատլէտը պատրաստիր միեւնոյն ձեռլ

ինչպէս № 139 ում ասուած է։ Պինձի մէջ
լցրու $\frac{1}{8}$ գրվ. կարագ, իոկ պասին՝ բաղցը
ձէթ, մէջը ածա մի գդալ սպիտակ № 2 ալիւր
և եփիր, հետը խառնելով. մէջը լցրու 2 բա-
ժակ սունկի բուլիօն, որը պատրաստում է
4—8 չոր սունկը՝ աղով և 2 զլուխ սոխով ե-
փելուց, լաւ եփ տուր, մէջը ածա մաներ կտըր-
տած եփած սունկ, կանաչի և հանիր կատլէտի
կողքին։

141. ԿԱԹԱՆՈՎ ԳԵՏԱՎԱՆՉՈՐ: ԳԵՄԻՆԱԽՄԵԼԻ-
ՀՈՐԸ կճպիր, լուս ու եփիր: Երբ վափիկի, ջու-
րը դէն ածա, իսկ գետնախմնձորը փայտէ ա-
մուր գգալով լաւ տրորիր, մինչև չի սառելո-
աղ արա, մի գգալ էլ իւզ, խառնիր, որ սպի-
տակի, վրէն 1 կամ $1\frac{1}{2}$ բաժակ կաթ ածա,
խառնիր, մի ձու արա, նորից խառնիր, հա-
նիր իւզով օծած թաւի մէջ, վրայից սուխարի
ցանիր և տաք հնոցում թխիր:

142. ԿԱՆԱԶ ԼՈԲԻ ԵՎ ՈՒ ԶՈՒՎԵ: 2 ԳՐՎ.
կանաչ լոբու ծայրերը պէտք է կտրտել և թե-
լերը հեռացնել, մանր կտրտել գանեակով, լուա-
նալ, պղնձի մէջ ածել, աւելցնել 4 գլուխ կը-
տրտած սոխ, վրէն ջուր լցնել մինչև լոբին կը
ծածկուի և եփին. երբ օր ջուրը կիսով չափ
պակասի՝ պէտք է աւելցնել մէջը սամիթ, ու-
հան և տարխուն և շարունակել եփելը, հետեւ

Էլ քաֆկիրով զարդել. երբ որ չուրս գրեթէ բոլորովին ցամաքի՝ $\frac{1}{4}$ գրվ. իւզ արա և իւզի մէջ նորից եփիր և երբ պատրաստ լինի հինգ հարած ձու արա երեսին և առանց կատանելու եփիր մօտ 10 րոպէ:

Կանաչ լորին կարելի է նաև չորացնել և
ձմեռը չորից նոյն ձեռվ կերակուր պատրաս-
տել, միայն եփելուց առաջ պէտք է եղցրած
ջրով մի երկու անգամ լուանալ:

143. ԿԱՆԱՀ ԼՈԲԻ ՎԱՌԵԿՈՎ: Կանահ լո-
բին եփիր ինչպէս գրուած է № 142-ի մէջ. երբ
որ իւզ անես, փոխանակ ձուի՝ աւելցրու մէջը
տապակած և կտրտած վառեկ և այնպէս շարու-
նակիր եփել մինչև որ լորին բոլորովին եփուի:

144. ԿԱՆԱՀ ԼՈԲՈՒ ԲՈՐԵԱՆԻ: Կանահ լո-
րին եփել № 142-ի ձևով, միայն սովոր և իւղը-
տեկի պէտք է անել և առանց ձուի: Միևնույն
ժամանակ տապակիր 1 վառեկ կամ գառան
միս և կտրտիր: Յետոյ բլիւդի վերայ մի երես
լորի ածա, մի երես գառեկ կամ միս դարսիր
և վրէն դարձեալ մի երես լորի: Մի բիշ
սառցնելուց յետոյ վրայից ածա քամած և
ջրի մէջ բաց արած կամ միայն թիշ քամած
մածուն, իսկ սորա վերայ ցանիր ծեծած դար-
չին, շարարաւագ և գաֆուան, նախապէս միա-
սին խառնելուց յետոյ:

145. ՊՈՐԻՆՃԱՆԻ ԲՈՐԱՆԻ: 10 պորինճան
կճպիր, երկար շերտերով կտրտիր, 1 սեղանի
գլաւ աղ արա և մի քիչ յետոյ ճմլելով՝ ջուրը
բամիր. քամելուց յետոյ մի աման կտրտած սո-
խի և $\frac{1}{4}$ գրվ. իւզի հետ տապակիր. տապա-
կելիս ածա մէջը մի քիչ կտրտած սամիթ և
ուեհան. այս կերակուրը հանիր բլիւդի վերայ,
չորս կողմը գարսիր տապակած ու կտրտած
վառեկը և վրէն ածա քամած ու ջրի մէջ լու-
ծուած կամ ուղղակի կիսատ քամած մածուն,
վրէն էլ ցանիր՝ զափան, շաբարաւաղ և դար-
շին՝ միասին խառնած:

146. ԲԱՄԻԱՅՈՎ ՄԻՍ: 2 գրվ. ոչխարի
միսը կտրտել և թիչ իւզի մէջ մի փոքր տապա-
կել 2—3 գլուխ մանր կտրտած սոխով, 2 գրվ.
կարմիր պորինճանը բամել, 3 գրվ. նոր բամիան
լուանալ և գարսել մսի վերայ, պորինճանի ջուրն
էլ վրէն ածել, աղ, պղպեղ անել և միջակ կրա-
կի վերայ եփել մինչև որ բամիան եփուի:

147. ԲԱԴՐԻԶՃԱՆ-ՊԵՕՐԵՔ: 10 պորինճա-
նը կիսիր մէջտեղերից. սոցա էլ կիսիր երկա-
րութեան վերայ. իւրաքանչիւր կտոր նորից կի-
սիր առանց բաժանելու միմեանցից և աղ արա:
Չուն հարիր, մէջը պանիր բերիր, մաղ-
պանոս կտրտիր և այս թանձր խառնուրդը

դնելով կիսած պորինճանների մէջ՝ իւղում տա-
պակիր:

148. ՍԵՐԿԵՒԻԼՈՎ ՄԻՍ ՏՈՒՄԱՅ: Վերցրու
8 հատ սերկելի, կոթի տեղերը թիչ կտրիր և
այնտեղից փորիչ գործիքով կամ եթէ այդ շը-
կայ՝ դանակով միջի գուլը հանիր. Այնուհետեւ
2 գրվ. ոչխարի փափուկ միսը լաւ ծեծիր, մէ-
ջը 2 գլուխ կտրտած սոխ, քիչ աղ ու պղպեղ և
կտրտած մաղդանոս արա, միասին խառնիր
և տապակիր մի գլաւ իւզի մէջ, յետոյ նորից
ծեծիր և այդ ծեծած մսով լցրու փորած սեր-
կելիները, կտրտած գլուխները նորից վրէն
ծածկիր, գարսիր պղնձի մէջ, հետը դարշին,
2 գլաւ շաբարաւաղ, $\frac{1}{4}$ գրվ. իւզ, մի բաժակ էլ
ջուր ածա, երեսը պինդ ծածկիր և թոյլ կրակի
վերայ եփիր այնքան, որ չըրբռուի:

149. ՌՈՒԼԵՏ: Ցաւարի միսը ծեծիր ինչ-
պէս կատլէտի համար, մէջը խառնիր ձու,
սպիտակ հաց, աղ, պղպեղ, ով ցանկանում է
նաեւ կծոխուր: Վերցրու ոչխարի փառը և կի-
սիր. ծեծած միսն էլ կիսիր. ամեն բաժինը
փաթթիր մի կտոր փառի մէջ, ծայրերն ամ-
րացնելով դիր թաւի մէջ և հնոցում խորովիր:
Առանձին առանձին եփիր մակարօն, ոև սալոր,
գետնախնձորն էլ կճպելով տապակիր: Յետոյ
խորոված միսը կտրտիր, գարսիր սկուտղի

վերայ և կողքին դարսիր մակարօնը, սալորն ու գետնախնձորը: Սոցա ջրից քիչ վերցնելով պատրաստիր հիւթ և ածա պատրաստած կերակրի վերայ:

150. ԾՆԵՐԵԿ ԵՎ ՈՒ ԶՈՒՈՎ: ԾՆԵՐԵԼՐ ծայրից կտրտում են մանր մանր, մինչև չորացած մասի հասնելը. չոր մասերը պէտք է դէն ածել. կտրտածը պէտք է լաւ լուանալ, ածել պղնձի մէջ, աւելցնել թիշ կտրտած սոխ, վըրէն բաւական ջուր ածել, աղ անել և եփել մինչև կփափկիր. յետոյ ջուրը քամել. պղնձում իւղ դնել և եփած ծներեկն ու նորից եփել թոյլ կրակի վերայ. մի քիչ եփելուց յետոյ՝ վրէն ածել հարած ձու ու առանց խառնելու եփել դարձեալ մօտ $\frac{1}{4}$ ժամ: Մի բրեգան լիքը ծներեկին հարկաւոր է 4 զլուխ սոխ, $\frac{1}{4}$ գրվ. իւղ և 6 ձու:

151. ՍՊԱՆԱՂ (շոմին) ԵՎ ՈՒ ԶՈՒՈՎ: Սպանաղից մաքրում են դեղնած տերմերը, լուանում և պղնձի մէջ բաւական ջրի մէջ քիչ եփում. յետոյ քամում և ակիշով լաւ ջարդում. մանր կտրտած սոխը իւղի մէջ տապակում են և մէջը ածում սպանաղը, աղ անում և լաւ խառնում. մի քիչ եփելուց յետոյ երեսին հարած ձու են անում և դարձեալ եփում $\frac{1}{4}$ ժա-

մի չափ: 4 գրվ. սպանաղին անում են $\frac{1}{2}$ գրվ. իւղ, 4 զլուխ սոխ և 10 ձու:

152. ՔԸՄԻՇՈՎ ԵՒ ԶԻՐԻՇԿՈՎ ՀԱՏ: 2աղ հաւը պէտք է լաւ մաքրել և եփել. $\frac{1}{4}$ գրվ. զիրիչկ մաքրիր, լուա և քիչ ջրի մէջ եփիր. մէջը արա 2 գրվ. քիշմիշ և 1 գրվ. շաքար և դարձեալ եփիր. երբ արդէն լաւ եփուած լինի հաւը կտրտիր, ածա սկուտղի վերայ և այդ եփած խառնուրդն էլ կողքին:

153. ՎԱԶԻ ՏԵՐԵՒՈՎ ՏՕԼՄԱՅ: 2 գրվ. ոչսարի կամ գառան չաղ և փափուկ մսերից ջղերը հանելով մնացածը լաւ պէտք է ծեծել, հետը խառնելով աղ, պղպեղ և քիչ բրինձ. ծեծած մոի հետ պէտք է խառնել և 2 ձու: Վազի տերեւը ածա եռցրած ջրի մէջ և շուտով հանիր, կոթերը կտրտիր և ծեծած միուր մանր մանր մէջը վաթթիր. այդ կոլոլակները գարսիր պղնձի մէջ, վրէն ծածկիր փոքր ափսէ, որ ջուր ածելիս չբարձրանայ: Դորա վերայ ածա մնացած ոսկորներից եփած մսացուրն այնքան, որ ափսէն ծածկուի ու թող, որ լաւ եփուի: Քամած մածունը բաց արա ջրի մէջ և երբ տօլման ամանի վերայ հանես՝ վրէն ածա մածունը, իսկ նորա վերայ էլ ծեծած դարչին ու շաքար:

154. ԿԱՂԱՄԲՈՎ ՏՕԼՄԱՅ: Մինոյն կեր-

պով պէտք է պատրաստել ինչպէս կազի տերկով, միայն փոխանակ վաղի տերեր՝ վերցնելու է կաղամբի բարակ տերեները. միսը մէջը փաթթելուց յետոյ տապակելու է իւղի մէջ. և ածելիս՝ մածուն, դարչին ու շաբար չի հարկաւոր, սրա փոխարէն թթուացնելու համար մսի մէջ պէտք է խառնել չոր հոն, ճանճուռի չիր, կծոխուր և կամ պոմագորի հիւթը:

155. ՍԵՐ ՊՈՐԻՆԱԾԱՆՈՒՏ ՏՕԼՄԱՅ: 2 գրվ. ոչխարի շաղ և փափուկ միսը պէտք է ծեծել, կտրտել վրէն մի գլուխ սոխ, հետը խառնել մի քիչ եփած բրինձ, աղ, պղպեղ ու մաղգանոս անել և այս բոլորը տապակել մի գդալ իւղի մէջ. ապա նորից ծեծել: 8 սեւ պորինանը կճպել, մէջները փորել և պատրաստ ծեծած միսը լցնել նոցա մէջ, իւղով տապակել թաւի մէջ և դարսել պղնձի մէջ. յետոյ 3 գրվ. կարմիր պորինանը լուանալ, կտրտել, եփել և մաղի մէջ քամել. ստացուած թանձր չուրը ածել տոլմի վերայ և եփել: — Ցանկացողը կարող է առանց իւղի մէջ տապակելու ուղղակի պղնձում եփել 2 գդալ իւղով և քամած կարմիր պորինանով ու աղ անելով:

156. ԽՆՉՈՐԻ ՏՕԼՄԱՅ: Միաը պատրաստում է նոյն ձեռվ ինչպէս № 154-ինը, միայն առանց բրնձի: 20 հատ թթուաշ խնձորի

գուլը հանել առանց կճպելու և պատրաստ ծեծած ու տապակած միսը լցնել մէջը և դարսելով պղնձի մէջ, 2 գդալ իւղ անել, 1 բաժակ էլ չուր, բիշ էլ շաբար ու դարչին և եփել մինչև խնձորը լաւ եփուի:

157. ՏԱՊԱԿԱԾ ԳԵՏԱԽԱՆՉՈՐ: Գետնախնձորը կճպիր, տափակ կտրտիր և ջրի մէջ ածա մինչև եփելը, որ չորանայ, յետոյ թաւի մէջ ձէթ ածա. գետնախնձորը ջրի միջից հանիր, աղ արա և ձէթի մէջ տապակիր: Հանելով ամանի վերայ վրէն շաքարաւաղ ցանիիր:

158. ԳԵՏԱԽԱՆՉՈՐ ՍՈՒՌՎ ՈՒ ԶԵԹՈՎ: 2 գրվ. գետնախնձորը կճեպով եփիր, կճպիր, մանը փշրիր, և աղ արա: 5 գլուխ սոխ մանը կտրտելով տապակիր $\frac{1}{4}$ գրվ. ձէթի մէջ, այնքան որ չայրուի, յետոյ փշրած կարտոֆիլը խառնիր մէջը և տապակիր:

159. ԽՈՅՎԱԾ ԴՐՈՒՄ: Դրումը անմիջապէս դնում են նոցի մէջ և խորովում մինչև կփափկի: Կտրտելուց յետոյ կարելի է վրէն անել շաքարաւաղ կամ եփած չոր հոն:

160. ԶԵԹՈՎ ՓԼԱՔ պատրաստում է նոյն ձեռվ ինչպէս և իւղով փլաւը:

Ձէթով փլաւի մէջ կարելի է անել՝ 1, քշմիշ, ընտրած, լուացած և փլաւի մէջտեղը ածած դամ քաշելուց առաջ:

2, զարլու կարելի է շինել, իւղի փոխարին ձէթի մէջ եփելով մուլսունդն ու քիշմիշը:

3, նուշ և բշմիշով, որոնք հաւասար չափով եփում են շաքարի և քիշ ջրի մէջ և ածում փլաւի երեսին:

4, ալուբալի, հոն և շոր, նոյն ձեւով շինուած, ինչպէս և իւղով փլաւի համար:

161. ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ ԿԱՏԱՏ: 1 գրվ. գետնախնձորը եփիր, եփելուց յետոյ կճպիր, և փալտէ գդալով լաւ տրորիր, որ կոշտեր չը մնայ մէջը, աղ և միքիշ մաղդանոս կտրտիր վրէն, կատլէտների ձեւ տուր, սպիտակ ալիւրի մէջ թաթախիր և երկու երեսն էլ ձէթի մէջ տապակիր:

162. ՏԱՊԱԿԱԾ ԲՈԽ: Քիշ թթխմոր բաց արէր գոլ ջրի մէջ, քիշ աղ արէր, մէջը սպիտակ ալիւր խառնեցէր, կտրտեցէր բոլսը և մէջը ածեցէր: Յետոյ մի մի գդալ հանելով ածեցէր ձէթի կամ իւղի մէջ ու տապակեցէր, հետք շուռ ու մուռ տալով. և այսպէս շարունակեցէր մինչեւ վերջանալը:

Միենոյն ձեւով կարելի է տապակել և տարխունը, քոնդարը, սոխն ու գետնախնձորը, միայն խմորը շատ ջրալի չպէտք է լինի:

163. ՍՈՒՆԿՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ: 2որ սունկը մէկ գիշեր պէտք է թրջել և միւս օրը լաւ

մաքրել ու կտրտել. յետոյ լաւ եփիր. մի քիչ էլ բրինձ եփիր առանձին, սոխը կտրտիր, տապակիր ձէթի մէջ. կտրտած սունկն էլ խառնիր սոխի մէջ ու միասին տապակիր. եփած բրինձն էլ խառնիր նորա մէջ:

Առ 10 կոպ. թթխմոր, պղնձում գոլ ջրում լուծիր, ալիւրով շաղախիր և հունցիր, քիշ աղ էլ արա և տաք տեղ դիր, որ խմորը բարձրանայ: Յետոյ պղնձից սեղանի վերայ շուռ տուր, տակը ալիւր փռէ և խմորը բաց արա. սունկը քիշ քարսիր բաց արած խըմորի վերայ, խմորի ափերը ծածկիր և կտըրտիր բաժակով կամ դանակով, ձեւ տուր, երեսին քիշ ձէթ բսիր և հնոցում թխիր:

164. ԿԱՆԱՀ ԼՈԲԻ ԸՆԿՈՒԶՈՎ: -2 գրվ. կանաշ լորու ծայրերը, թելերը կտրտիր և կոտրտէ մանր. լուա, ածա պղնձի մէջ, ջուր ածա վրէն մինչեւ կծածկէ և եփիր. երբ մի անգամ եռ գայ՝ աւելցրու մէջը կտրտած սոխ, կանաշեղէն և աղ և լաւ եփիր մինչեւ որ ջուրը ցամքի և լոբին հում չմնայ. յետոյ $\frac{1}{2}$ գրվ. ընկոյզ ծեծիր և արա մէջը, մի երես էլի եփ տուր:

165. ՉԻԹՈՎ ՊՈՐԻՆՃԱԾՆ: 10 պորինճանը կճպիր, մէջերքից կտրիր և յետոյ մանր կտրտիր երկարութեան վերայ. ածա մի ամանի մէջ,

բաւական աղ արա, 5 րոպէի չափ տրորիր ու յետոյ միջի ջուրը պինդ սպմելով քամիր, որ դառը ջուրը դուրս գայ և լաւ լուայ որ կորիզներից մարբռւի. Յետոյ բաւական սոխ կըտըրտիր մանր, ածա պղնձի մէջ սոխը, պորինճանը, $\frac{1}{4}$ գրի. ձէթ, աղ, կտրտած կանաչեղէն և թոյլ կրակի վերայ տապակիր այնքան, մինչեւ որ պորինճանը հում չմնայ: Յանկացողը սորա հետ գործ է դնում ոխտոր ու բացախ խառնած:

166. ԶԻԹՈՎ ԼՈԲԻ: Լորին ջրի մէջ եփիր քիչ աղով. երբ եփուի՝ քամիր վլաւքամիշի մէջ: Բաւական սոխ տապակիր ձէթի մէջ, լորին ածա մէջը ու նորից տապակիր:

167. ՂԱՆՉԻՒ: Պէտք է լաւ մաքրել, լուանալ, բաւական ջրի մէջ ածել ու եփել. յետոյ հանել պղնձից և սառը ջրի մէջ ածել. 10 րոպէից յետոյ հանել, ածել սկուտղի վերայ, աղ անել ու խառնել, վրէն ձէթ իսկ ցանկացողը կարող է և քացախ ածել:

168. ՍՎԵՆՏՐԻ: լաւ մաքրիր, քիչ աղով ջրի մէջ եփիր, յետոյ ջրից հանիր ու բացախով տար սեղան:

169. ՆՇԷՄՊԱԸ: $1\frac{1}{2}$ գրի. քաղցր նուշը ածա եռցրած ջրի մէջ, $\frac{1}{2}$ ժամ մէջը թող և հանելով կճպիր, ծեծիր հաւանգի մէջ, ցանե-

լով վրէն մի քիչ ջուր. ծեծած նուշը բաց առա 3 բաժակ եռցրած ջրի մէջ, կտափ մէջ բամիր, մնացորդը նորից ծեծելով՝ դարձեալ 3 բաժակ տաք ջրի մէջ բացարա և բամիր. և ստացուած նշաշուրը ածա պղնձի մէջ, աւելցրու վրէն $\frac{1}{2}$ գրի. շարարաւազ և 2 բաժակ լուացած բրինձ և եփիր մինչեւ թանձրանալը: Եթէ բրինձը հում մնայ, իսկ նշաշուրը ցամաքի՛ ծեծած նշի մնացորդից դարձեալ կաթը հանելով՝ աւելցրու վրէն մինչեւ որ բրինձը բոլորովին եփուի:

170. ՊՈՄԱՆԴՈՐՈՎ ՍՈՒԽ: 1 գրի. պոմադորը կտրտիր, միջի սերմերը հանիր և դէն ածա, քիչ մսաջրի մէջ եփիր, քամիր մաղի մէջ և քիչ շարար աւելցրու: Պորա վերա ածա մի գդալ իւղ և մի գդալ ալիւր, աղ արա, երկու գդալ մսաջուր աւելցրու և եփիր:

171. ՍՎԱԼՈՐ ՍՈՈՒԽ: 1 գրի. քաղցր սալորը, քիչ մեխակ և դարչինի հետ եփիր ջրի մէջ, անցկացրու մաղի միջով, հետը խառնիր $\frac{1}{2}$ գրի. շարար, $\frac{1}{2}$ գինուր բաժակ սպիտակ գինի, 1 գդալ գետնախնձորի ալիւր և մի գդալ ջուր, ու բոլորը միասին խառնելով՝ եփիր:

172. ԽՆՉՈՐ ՍՈՈՒԽ: Պէտք է $\frac{1}{4}$ խնձոր կճպել, կտրտել և գուլը մաքրել, իսկ կճեպները եփել 3 բաժակ ջրի մէջ, քամիւ ու

բամած ջուրն ածել իմնձորի վերայ. յետոյ աւելցնել մէջը 6—8 կտոր շաքար ու քիչ դարչին. դնել կրակի վերայ, միաժամանակ խառնել և հետը մէջն ածել մի երկու գդալ զրի մէջ լուծած գետնախնձորի ալիւր և երբ լաւ եփուի վերցնել կրակից:

ԱԼԻՒՐԵ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ:

173. ՄԱԿԱՐՕՆ ԵՊ. ՈՒ ՉՈՒՌՎ: 1 գրվ. մակարօն լուս և եփիր քիչ աղով զրի մէջ, բամիր և տապակիր $\frac{1}{2}$ գրվ. իւղի մէջ, աւելցնելով մէջը 2 ձու. երբ իւղի մէջ լաւ տապակիր երեսին պէտք է անել 4 հարած ձու և եփել մինչև ձուն թերխաշ կեփուի:

174. ԷՐԴԾԻ ԵՒ ՔԱՂՅՐ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ԽՄՈՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԲ: Հունցիր պինդ խմոր մի կամ 2 ձուից, նոյնքան զրից և մօտ $1\frac{1}{2}$ բաժակ կամ $\frac{1}{2}$ գրվ. ալիւրից և $\frac{1}{2}$ թէյի գըղալ աղից: Փայտէ գրտնակով բարակ բաց արա, ալիւր ցանելով վրէն, կտրտիր շերտ շերտ երկու մատ լայնութեամբ, կտորները մէկմէկու վերայ դարսիր, մանր կտրտիր, սեղանի վերայ փոփոխ, որ չորանայ:

Կարկանդակների համար նոյնպիսի խմոր պէտք է հունցել, բաց անել, մանր գունդերով

միջուկից դարսել վրէն, ծածկել բաց արած խմորով, ափերը ջրով թաց արած, փոքր բաժակով շրջանակների ձեւով կտրտել, ափերը ամրացնել, ածել աղով զրի մէջ և եփել:

175. ԱԼՈՒԲԱԼՈՎ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԱԿ: Պատրաստիր խմորը № 173-ի համեմատ և բացարան: Վաղօրօք պատրաստիր ալուբալը. կորիզները հանիր, շաքարի մէջ շաղախիր, 2 թաս մաքրած ալուբալին 1 թաս շաքար արա և դիր արեւի տակ: 3—4 ժամից յետոյ ածա քամիչի մէջ. ալուբալի դուրս թողած հիւթը ածա պղնձի մէջ. ալուբալով լցրու կարկանդակների խմորիները և եփիր: Խսկ հիւթը պէտք է գործ դնել կարկանդակների հետ թարմ թթուասերով:

176. ԹԹՈՒԱՍԵՐՈՎ ՄԱԿԱՐՕՆ: $\frac{1}{2}$ գրվ. մակարօնը մանիր կտրտիր, եփիր աղ արած զրի մէջ, այնպէս որ շատ շեփուի ու ածա մաղի վերայ: Երբ ջուրը քամուի՝ ածա մի ամանի մէջ, աւելցրու 2 ձուի դեղնուց $\frac{1}{2}$ բաժակ թթուասերի կամ 1 բաժակ կաթի մէջ բաց արած, քիչ էլ իւղ, խառնիր, ածա իւղով օճած հողէ ամանի մէջ ու եփիր հնոցի մէջ:

177. ՔԱՂՅՐ ԹԵԼԿԱՄՈՐ (ճաճռա): 1 գրվ. թելխմորը (վերմիչել) եփել եռցրած աղաջրի մէջ և բամել ու ածել մի ամանի մէջ. աւելցնել վրէն 6 ձու, $\frac{1}{2}$ գրվ. շաքար, 3 գդալ

իւղ, բոլորը միասին խառնել, մաքուր պղնձի
մէջը ամեն կողմից իւղ քսել, տակը մաքուր
թուղթ փռել, կողքերին ծեծած պաքսիմատ
ածել և խառնուրդը լցնել մէջը, հնոցի մէջ
դնել և թխել, երբ որ թխուի՝ պէտք է ամ-
բողջապէս սկսուազի վերայ հանել։ Կէս շիշ գի-
նի, շաքար, մեխակ և դարչին միասին եփելով՝
ածա վրայից։

178. ԲՈՒԴԻՆԳ. Մի սպիտակ բուլվին
թրջիր կաթի մէջ և քամիր. յետոյ դիր պղնձի
մէջ, վրէն ածա 6 ձուի գեղնուց, $\frac{1}{2}$ գրվ. էլ շա-
քար, լաւ խառնիր, յետոյ 6 ձուի սպիտակուցը
լաւ ֆրփրացնելով խառնիր նորա հետ. այնու-
հետև կաղապարի ներսից ամեն կողմից իւղ
քսիր, վրէն էլ ծեծած պաքսիմատ. իսկ յետոյ
լցրու պատրաստած խառնուրդը. կաղապարը
դիր մի պղնձի մէջ, վրէն ջուր ածա այնպէս,
որ կաղապարի մէջ եռ տալիս ջուր չմտնի, լաւ
է որ 3 մատի չափ ջրի մէջ լինի. կաղապարի
բերանը ծածկիր և դիր կրակի վերայ մինչեւ
որ թխուի։ Երբ որ պատրաստուի՝ հանիր բը-
լիւղի վերայ և վրէն ածա իւր սոսւսը, որ պէտք է
հետեւեալ կերպով շինել. — 3 ձուի գեղնուց,
 $\frac{1}{2}$ շիշ գինի, $\frac{1}{4}$ գրվ. ծեծած շաքար լաւ
խառնիր հարիչով մինչեւ որ թանձրանայ։

Դ. ՄԱՍՔ

ՃԵՅԻ ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

1. ԱԼԻԽԻՐԻ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

179. ԿԱՐԱՆԴԻՎ ՏՎԱՐՈԳՈՎ (ԽԱՃՈ)։
Խմորը պէտք է պատրաստել 173-ի եղանա-
կով. 1 գրվ. թարմ տվարօգի հետ խառնիր
մի գլազ թթուասեր, 1 ձու և աղ. և խմորը
բացանելով կազմիր կարկանդակներ ու ածա
աղ արած եռցրած ջրի մէջ։ Երբ որ ջրի երե-
սը բարձրանան՝ հանիր սկսուազի վերայ։ Հետո
գործ են դնում իւղ, իսկ ով սիրում է նաեւ
թթուասեր, շաքար և դարչին։

180. ԿԱԹՆՈՎ ՄԱԿԱՐՕՆ։ $\frac{1}{2}$ գրվ. մա-
կարօնը պէտք է ածել եփ տուած ջրի մէջ,
եռցնել և հանել քամիչի մէջ, վրէն սառը ջուր
ածել, երբ ջուրը քամուի՝ մակարօնը հանել և
ածել իւղով օծած պղնձի մէջ, դորա վերայ էլ
ածել $\frac{1}{2}$ բաժակ եռցրած կաթ, աւելցնել 1
գլազ կարագ, $\frac{1}{4}$ բաժակ շաքարաւազ, վրէն

ցանել սուխարի և թխել։ Հետը կարելի է գործ դնել շաքար և դարչին։

181. ԲՈՒՐԲՈՒՇԵԼԱ. 4 ձուփ և սպիտակ խոշոր ալիքից պինդ խմոր հունցել, խմորը բաց անել շատ բարակ, կտրտել զանազան ձեւի և էլի աւելի բարակացնել ու մէջ տեղը կտրտել ձեւիչով, իւղը եռցնել թաւի մէջ, խմորները մէկ մէկ դնել մէջը և պատառաքաղով խսկոյն շարժել, որ ուռչի. մի քանի վայրկեանում արդէն կլարմրի, խսկոյն հանեցէր և շաքարաւաղ շաղ տուէք վրէն։

182. ԱԼՎԴԻԱ. $1\frac{1}{8}$ բաժակ ջուր, $2\frac{1}{4}$ բաժակ ալիք և 2 մսխալ չոր թթխմոր, 1 թէյի գդալ աղ լաւ խառնեցէր միասին, ծածկեցէր մի շորով և տար տեղ գրէք։ Երբ խմորը բարձրանայ՝ նորից հունցեցէր 1 ձուով և 1 գդալ իւղով ու գրէք որ նորից բարձրանայ և յետոյ էլ չխառնելով, մի մի գդալ վերցրէք, դրէք թաւի վերայ եռցրած իւղի մէջ ու երկու կողմից տապակեցէք։ Սորա հետ ուտում են շաքար ու քաղցրաւէնի։

183. ԱԼՎԴԻԱ ԽԵԶՈՐՈՎ. Պատրաստիր խմորը, ինչպէս ասացինք № 181-ի մէջ։ Տապակելուց առաջ 2 խնձոր կճպիր, միջուկը հանիր և բարակ բարակ կտրտելով խառնիր խմորի մէջ։ Այնուհետև խմորը գդալ գդալ հանիր,

ամեն գզալի մէջ մի կտոր խնձոր և տապակիր։ Ուտում են շաքարով։

Ալաղիայի խմորը կարելի է շինել և այս կերպով. վերցրու 2 ձուի գեղնուց, $\frac{1}{2}$ բաժակ կաթ և $\frac{1}{2}$ բաժակ ջուր, ով ցանկանայ քիչ էլ շաքար, միասին խառնիր, մէջը ածելով ալիք, մինչեւ որ միջակ թանձրութիւն ստանայ. երբ պատրաստուի մէջը խառնիր տափակ կտրտած խնձոր, իսկ ով ուղում է քաղցրաւէնի. յետոյ 2 ձուի սպիտակուցը լաւ փրփրացրու, մէջը խառնիր և տապակիր ինչպէս վերեւ ասուած է։

184. ԲԻՍԿՎԻՏ (Ճրաշենա). $1\frac{1}{8}$ գրվ. իւղ հարիր բաժակի մէջ մինչեւ սպիտակելը. 3 ձուի գեղնուց էլ $\frac{1}{4}$ բաժակ շաքարով (ոչ շաքարաւաղ) հարիր մի ուրիշ բաժակում մինչեւ սպիտակելը, երկուսը միասին խառնիր, լցնելով մէջը 2 բաժակ խոշոր սպիտակ ալիք և ածելով վրէն 2 բաժակ կաթ և զգուշութեամբ խառնիր։ Մեծ թաւի մէջ 1 գդալ իւղ ածա, երբ շատ կտաքանայ՝ խմորը ածա վրէն և $\frac{1}{2}$ ժամ դիր հնոցը որ թխուի։

185. ԽԵՂԱ ԱԾՊՆԵՑՆԵՐ. Սպիտակ բուլին պէտք է հաստ շերտերով կտրտել. 1 բաժակ կաթի հետ 2 ձու խառնել և $\frac{1}{4}$ բաժակ շաքար, կարելի է աւելացնել և $\frac{1}{4}$ գդալ աղած

դարչին։ Ամեն մի կտոր բուլկին թրջիր այդ կաթի մէջ և գարսիր մէկ մէկու վերայ խորը ամանի մէջ։ Վրայից ածա մ'նացորդ կաթը և մի քանի բոլէ թող որ ուռչին։

Թաւի մէջ $\frac{1}{4}$ գրվ. իւղ տարացրու, հացերը գարսիր մէջը և տապակիր երկու կողմից չետը կարելի է գործ դնել բաղցրաւէնի։

186. ԲԼԻՆՉԻԿ (կաթխմոր)։ 1 ձու, 1 բաժակ ալիւր և $1\frac{1}{2}$ բաժակ կաթ խառնիր և աղ արա։ Թաւի վերայ աղ բսելով՝ տարացրու, շորով մաքրիր, իւղով օծիր և էլի տաքացրու, մի գգալ խմոր ածա վրէն այնպէս, որ թաւի ամեն կողմը տարածուի և զիր պլիտի վերայ։ Երբ բլինը սկսի բարձրանալ և թաւից բաժնուել և երբ մի երեսը եփուի, վերցրու և զիր մաքուր սեղանի վերայ։ Թաւային կրկին իւղ ըսկիր, խմոր ածա վրէն, և այդպէս շարունակիր մինչև վերջ։ Ճաշից առաջ իւրաքանչիւր բլինը եռանկիւնի ծալիր, սպիտակ երեսը գրուից, գարսիր իւղ բսած թաւի վերայ, երկու կողմից եփիր և սեղան տար շաքարով ու քաղցրաւէնիով։

187. ԽՆՉՈՐՈՎ. ԲԼԻՆՉԻԿ։ Բլինչիկներ թըլիիր № 186-ի պէս։ Վերցրու 2 գգալ ալիւր և 1 գգալ կարագ, լաւ խառնիր $\frac{3}{4}$ բաժակ կաթի հետ, եռցրու խառնելով, մէջը ածա $\frac{1}{4}$

բաժակ շաքարաւազ և քիչ ծեծած դարչին և խառնիր։ Երբ բլինները թխուին, ամեն մէկին բսիր վերոյիշեալ ալիւրէ խառնուրդը, աւելցնելով մէջը 2 հատ մաքրած և մանր կտրտած խնձոր։ 2 որս ծալ արա, զիր թավի վերայ եռցրած իւղի մէջ և երկու կողմից եփիր։ Յանկացողը կարող է հետը գործ դնել մորի (մալիսա) կամ ուրիշ քաղցրաւէնի։

188 ԾԱԼ-ԾԱԼ ԿԱՐԿԱՆԴԱԿ (слоеный пирожок). 1 գրվ. ալիւրից սառը ջրով խմոր հունցիր. սեղանի վերայ այդ խմորը ըիշ բաց արա, $\frac{1}{2}$ գրվ. կարագը երեք մասն արա և մէկ կտորը խմորի մէջ դնելով՝ խմորը ծալիր, էլի գրդնակով բաց արա և երեք անգամ մինենյնը կրկնիր, աւելացնելով մնացեալ կարագն էլ. խմորը պէտք է ծալել ամեն անգամ այսպէս։ առաջ աջ ու ձախ կողմերից ծալել մէկու վերայ չորս տակ, յետոյ այդ երկար շերտը վերելից ու ներբեկից վրայ ծալել գարձեալ չորս տակ. և այսպէս երեք անգամ։ չորրորդ անգամ բաց արա այնպէս, որ խմորը շատ բարակ չինի։ Վաղորօք պէտք է պատրաստել գովը. այն է փափուկ միսը պէտք է լաւ ծեծել, կըտրտած սոխի հետ տապակել և երբ տապակուի՝ 3 եփած ձու էլ մէջը լաւ ծեծել, աղ անել և լաւ տապակել։ Յետոյ միսը ըիշ ըիշ շա-

րիր տափակացրած խմորի վերայ, խմորը ա-
փերից ծածկիր մսերի վերայ և կտրտիր ա-
ռանձին առանձին ու ափերը ամրացրու. վե-
րայից քսիր ձուի դեղնուց և գնելով երկաթէ
թիթեղի վերայ՝ հնոցի մէջ թխիր մինչև կան-
մըկը:

2. ՔԱՂՅՐ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԿՈՄՊՈՆԵ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ: Թէ արգանակը և թէ
կոմպոտը եփւում են մի տեսակ, միայն թէ արգանա-
կի համար օրինակ 4 մարդու համար 4 ափսէ ջուր են
վերցնում, իսկ կօմպօտի համար՝ 1 ափսէ, շաքարը
երկուսի համար էլ նոյնքան անելով։

189. ՉՈՐ ՊՏՈՒԴՆԵՐԻՑ ԱՐԳԱՆԱԿ ԿԱՄ
ԿՈՄՊՈՏ: 1 գրվ. սկ ճանճուրը, չոր տանձ, չոր
խնձոր և չամիչ տաք ջրում լուա, ածա պղնձի
մէջ մի կտոր դարչինի հետ, աւելցրու $\frac{1}{4} - \frac{1}{2}$
բաժակ շաքար, ջուր ածա և եփիր մինչև փափ-
կի, եթէ ուզում էք արգանակ եփել՝ աւելցրու
մէջը մի թէյի գլալ գետնախնձորի ալիւր $\frac{1}{4}$
բաժակ սառը ջրի մէջ լուծուած և եռցրու։

190. ԹԱՐՄ ԽՆՉՈՐԻ ԵՒ ՍԵՒ ՃԱՆՃՈՒԹԻ
ԿՈՄՊՈՏ: $\frac{1}{4}$ գրվ. ճանճուրը առանձին եփիր:
3 բաժակ ջրով և մի բաժակ շաքարով եփիր

խօսր օշարակ. 4 բաղյր և 4 թթու խնձոր
կճպիր, միջուկները հանիր, ամեն մէկը 8 մասն
արա և ածա օշարակի մէջ ու եփիր մինչև կակ-
ղելը, գցելով մէջը մի կտոր դարչին։ Ամանի
վերայ հանելուց յետոյ պէտք է ածել մէջը և
եփած ճանճուռը։

Ճանճուռի ջուրը իրեն դեղ էլ են խմում։
191. ԽՆՉՈՐԻ, ՏԱՆՉԻ, ՆԱՐՆՁԻ ԵՒ ՃԱՆ-
ՃՈՒՌԻ ԿՈՄՊՈՏ: $\frac{1}{2}$ գրվ. ճանճուռը մաքուր
լուա և եփիր մինչեւ լաւ փափկի. յետոյ քա-
միր: 1 գրվ. խնձորն և 1 գրվ. տանձը կճպիր,
կտրտիր ամեն մէկը չորս մաս, մէջները մե-
խակիներ ամրացրու։ 1 բաժակ ջրի մէջ ածա
1 բաժակ պինի, 1 գրվ. էլ շաքար, քիչ դար-
չին և եփիր մինչև քիչ թանձանայ. սորա մէջ
ածա տանձը և եփիր այնքան որ չքրբրուի.
յետոյ ածա մէջը խնձորը և այն էլ եփիր ու հա-
նիր որ սառչի։ Այնուհետև սկուտղի վերայ մէջ-
տեղը դարսիր ճանճուռը, դորա շուրջը տանձն
ու խնձորը. 2 նարինջ կտրտելով ու գոլ օշա-
րակի մէջ թաթախնելով՝ դարսիր նորա բոլորը
և օշարակն էլ ածա վրէն։

192. ՊԱՂՊԱՂԱԿ: Վերցրու 1 վանիլ, 1
լիմոնի կճեպ, 2 գրվ. շաքար, 10 ձու. Վա-
նիլը կտրտիր և լիմոնի կճեպի վերսի մասը
կճպիր, շաքարն ու ձուն խառնիր միմեանց

հետ: 12 բաժակ կաթը տաքացրու, ածա հարած ձուի մէջ և խառնիր. դիր պլիտի վերայ և հարիչով խառնիր, թող ըիշ ըիշ թանձրանայ, միայն չը եռ գայ և չկտրուի. յետոյ բաժիր մաղի մէջ. ածա պղնձում և սառուցի վերայ սառցրու. ածա կաղապարի մէջ, ծածկիր վրէն թուղթ և յետոյ խուփը. ու դիր տակառի մէջ, որի չորս կողմը լցրու սառուցով, իսկ սառուցի վերայ աղ լցրու: Շուտ չուտ պտոյտ տուր կաղապարը, երբ սառուցը հալուի՝ դարձեալ աւելցրու ինչպէս նաև ազը: Երեք չորս անգամ փայտի գդալով պէտք է խառնել պաղպաղակը, որ լաւ սառչի: Եւ այդպէս պէտք է մէկ կողմից պտոյտ տալ և միւս կողմից տակառից ջուրը բաց թողնել:

193. ՊԼՈՄԲԻՐ: $\frac{3}{4}$ գրկ. շարար և 6 ձուի դեկնուց մի փոքր պղնձում լաւ խառնիր, ինչպէս գոգիմոգի, հետը խառնելով 1 կտրտած վանիլ և լիմոնի կճեղ. վրէն խառնելով ածա 1 բաժակ կաթ, ըիշ կրակի վերայ դիր և տաքացրու, յետոյ անցկացրու մաղի մէջ և այդպէս պղնձով սառցրու սառուցի վերայ: Այնուհետեւ մի ուրիշ ամանի մէջ $\frac{1}{2}$ չիշ լաւ հում սերը հարիչով փրփրաց և միասին խառնիր ձուի հետ: Կաղապարի մէջ մանր կտրտիր մի երկու ծուկատ (պտուղների չոր բաղցրաւենի),

վրէն լցրու պատրաստած խառնուրդից, իսկ նորա վերայ էլ դարձեալ մանրացրած ծուկատ. ծածկիր մաքուր թուղթ ու խուփը, դիր սառուցի մէջ, շատ աղ արա սառուցի վերայ, որ շուտով սառչի: Երբ պատրաստ լինի՝ առաջ կաղապարը մաքուր լուա, լաւ մաքրիր, սկուտղի վերայ մի անձեռոց փուիր և դանակով պլոմբիրը հեռացնելով կաղապարից՝ շուռ տուր նորա վերայ: Չորս կողմը շարիր բիսկվիտ:

194. ԿՐԵՄ: Մի չիշ հում սերը ածա միջակ մեծութեան պղնձի մէջ և դիր սառուցի վերայ. մի ուրիշ փոքր պղնձի մէջ ածա 15 թերթ սոսինձ և մի թէյի բաժակ գոլ ջուր ածելով վրէն ըիշ կրակի վերայ խառնիր, որ տակը չկաչի և չայրուի և դիր մի տեղ որ սառչի: Մի ուրիշ փոքր պղնձի մէջ էլ 3 ձուի դեկնուց. $\frac{1}{2}$ գրկ. շարար, մի գինուր բաժակ կամ քիշ աւելի կաթ, մի լիմոնի կճեղ բարակ կճպած և մի վանիլ, այս բոլտրը միասին կըրակի վերայ խառնիր այնպէս որ լաւ թանձրանայ, յետոյ գդալով մաղի մէջ անցկացրու, այնպէս որ համը հետեւ անյնի: Հարիչով հում սերն այնքան հարիր, որ թանձրանայ. ձուի խառնուրդը կամաց կամաց ածա ու խառնիր սերի մէջ, միայն սերը շատ սառած չպէտք է լինի, հարիչով մի քիշ հարիր. սօսինձն ածա

մէջը և խառնիր, այս խառնուկովը լցրու կաղապարի մէջ և գիր սառուցի մէջ ու սառը տեղ դիր,
որ շփճանայ: Երբ սկսուտղի վերայ հանես՝
շուրջը բիսկիլիտ շարիր:

Յ. ՔԷՂՑՐ ՊԻՐՈԳՆԵՐ:

195. ՊԱՍՈՒՏՅ ԽՄՈՐ: Նախընթաց երեսին վերցրու $1\frac{3}{4}$ բաժակ սառը ջուր, 3 մըսկալ չոր թթխմոր և 3 բաժակ կամ 1 գրվ. ալիւր և սոցանից խմոր հունցիր, շորով ծածկիր, որ բարձրանայ: Միւս օրը վաղ առաւօտ նորից հունցիր, ինչքան կարելի է լաւ, խառնելով հետը մի թէյի գդալ աղ, ով կցանկայ՝ կարող է աւելցնել 1 կամ 2 գդալ արեածաղկի կամ ընկուզի ձէթ 1 կամ 2 գդալ շաքարի հետ լաւ հարած, լիմոնի մանր աղած շոր կճեպ, 3 բաժակ ալիւր էլ աւելցրու և մի քիչ պահիր՝ տակը փուելու համար: Այնքան հունցիր մինչև որ խմորը ձեռքերին էլ չկպչի, թող որ բարձրանայ, բաց արա, գուլը գիր վրէն, ափերը ամրացրու, թթեթեղի վրայ դիր, սորա վերայ ալիւր շաղ տալուց յետոյ, թող որ բարձրանայ, վրայից մեղքաջուր, թէյ կամ սուրճ քսիր և խոկոյն հնոցը դիր, որ թխուի ու կարմրի:

196. ՈՒՏԵՍՈՒՏՅ ԽՄՈՐ: Երեկոյին խմոր

հունցիր $1\frac{3}{4}$ բաժակ խիստ սառը ջրից, 3 մսխալ չոր թթխմորից, 1 ձուով, $\frac{1}{4}$ գրվ. հարած — սպիտակացրած իւղով և 2 գրվ. ալիւրով, լաւ հարիր և անձեռոց ծածկելով թող բարձրանայ: Երբ առաւօտը խմորը բարձրանայ, կլոր բաց արա, վրէն միջուկը դիր, ափերն ամրացրու, թող բարձրանայ, միայն վլայից ջրախառն գեղնուց քսիր և կէս ժամ դիր հը: Հոցում: Յանկացողը խմորի մէջ կարող է խառնել $\frac{1}{4} - \frac{1}{2}$ բաժակ ծեծած ձուախառն շաքար: Հնոցից հանելուց յետոյ պէտք է իւղ քսել վրէն:

197. ՓԽՐՈՒՆ ԽՄՈՐ ԹԹՈՒԱԾՆԵՐՈՎ: $\frac{1}{2}$ գրվ. թթուասերը և $\frac{1}{4}$ գրվ. իւղը տաքացրու այնպէս, որ փափկի, 1 ձու, $\frac{1}{4}$ թէյի թասով շաքար, $\frac{1}{4}$ թէյի գդալ աղ, $\frac{1}{2}$ թէյի գդալ սողա խառնիր, ալիւր ցանելով վրէն, որ հեշտ լինի բաց անել: Երկաթէ թիթեղի վրայ սառը իւղ քսիր, բաց արած խմորը փոխիր նորա վերայ, վրէն քաղցրաւենի կամ խնձորի պիւրէ դիր, խմորի կտորով ծածկիր, ափերն ամրացրու, մանր շաքար ցանիր վրէն և դիր հնոցի մէջ մօտ $\frac{1}{2}$ ժամ:

198. ՊԻՐՈԳԻ ԸՆՏԵՐ ԽՄՈՐ: Վերցրու բուլկու խմոր, դիր պղնձի մէջը, աւելցրու բաւական իւղ, կաթ, ձու, ալիւր, քիչ էլ գոլ ջուր, միասին խառնիր. Երբ խմորը բարձրանայ՝ սե-

զանի վերայ ալիւր փռիր և վրէն այդ խմորը
նորից հունցիր. իսկ պիրոգ կարելի է պատրաս-
տել վերոյիշեալ եղանակով։

199. Խճշորով կարկանդակ։ Խմորը շի-
նում են ինչպէս ասուած է № 194-ի, 195-ի կամ
196-ի մէջ։ 4—8 խնձոր պէտք է կճպել, մանր
կտրտել, շաքարաւազի հետ խառնել, դնել բաց
արած խմորի մէջ, երեսին իւղ բնել ու թլ-
խել։

200. ՍԵՐ ՍԵԼՈՐՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ։ Խմորը
շինել ըստ № 194, 195 կամ 196։ $\frac{1}{2}$ գրկ.
սեւ սալորը պէտք է ածել մի բաժակ կէծ զրի
մէջ և եփել այնքան որ բրդուի, յետոյ խա-
խալի միջից տրորելով անցկացնել, նորից ե-
փել, աւելցնելով քիչ շաքարաւազ, դնել խմորի
մէջ եւ թխել։

201. ՔԱՂՅՐԱԿԻՆԻՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ։ Խմորը
պէտք է հունցել 194, 195, և 196-ի եղանա-
կով։ Մնացեալը պատրաստում է ինչպէս վերը
ասուած է։

4. ՊՏՈՒՀՆԵՐ։

202. ԹԱՐՄ ՎԱՅՐԻ ԵՒ ՊԱՐՏԷԶԻ ԵԼԱԿ։
ՄՈՐ (մալինա) ԿԱԹՈՎ ՈՒ ՇԱՔԱՐՈՎ։

203. ԽՈՐՈՎԱՌ Խճշոր ՇԱՔԱՐՈՎ ՈՒ
ԿԱԹՈՎ։ Խիճորը խորովելիս՝ միշտ պէտք է

թաւի մէջ քուր ածել։ Իսկ աւելի լաւ է,
որ միջուկը հանէր, շաքար ածէր մէջը և զուր
շաղ տաք վրէն։

204. ԶՄԵՐՈՒԿ ԿԱՄ ՍԵԽ։



լիշը պատրաստ է: Երբ հնոցից համեք՝ պէտք
է կոզքից զնէք մազի վերայ ու գլորէք որ ա-
մեն կողմից հաւասար հովանայ:

206. ՀԱՍՏՐԱԿ ԶԱՏԿԱՑԱՅ: Միջակ մե-
ծութեան կաղապարի համար վերցրու 7—8
գրվ. թարմ խաճոյ (ԵՎՈՐԾԵ), մի օր ու գիշեր
ճնշոցի տակ դիր, յետոյ տրորելով քամիչի մէջ
անցկացրու, աւելացնու մէշը 1 բաժակ բոլորո-
վին թարմ թթուասեր, $\frac{1}{2}$ գրվ. ամենաթարմ
կարագ, 2 թէյի գդալ աղ, $\frac{1}{2}$ բաժակ և մինչեւ
անգամ աւելի շարար, նայելով համին, բոլորը
միասին շաղախիր ինչըան հնար է լաւ, որ գուն-
դեր չը մնան մէշը, ածա փայտի կաղապարի մէջ,
որի ներսից ծածկած պիտի լինի մաքուր բարակ
անձեռոց, երեսին տախտակ ծածկիր և մի
ծանր քար էլ վրէն: Մի օր ու գիշերից յետոյ
գգուշութեամբ հանիր սկսուղի վերայ:

Հատերը մէշը քշմիշ են խառնում և դըր-
սից զարդարում: Հոտի համար կարելի է լի-
մոնի կամ ապելսինի չոր կճեղ աւելացնել: Սա-
ռը տեղ պէտք է պահել, որովհետև 3—5 օրից
յետոյ սկսում է փշանալ:

207. ԸՆՏԻՐ ԶԱՏԿԱՑԱՅ: Մի մեծ տա-
կառի կամ պղնձի մէջ 60 ձու կոտրիր, 6 գրվ.
էլ շաքար արա և թիակով լաւ խառնիր: Յետոյ
աւելցրու վրէն 15 բաժակ գոլ կաթ և լաւ խառ-

Ե. ՄԱՍՆԸ.

205. ԿՈՒԼԵԶ ՀԻԼՈՎ: Երեկոյեանից վեր-
ցրու 2 բաժակ խիստ սառը ջուր, 3 մսխալ
չոր թթխմոր, $\frac{1}{2}$ գրվ. իւզ՝ քրեղանի մէջ $\frac{1}{2}$
բաժակ շաքարով լաւ սպիտակացրած, 20 հա-
տիկ ծեծած հիլ, 1 ձու, մի գդալ աղ և 2
գրվանքի շափ ալիւր, խառնիր և իսկոյն հուն-
ցիր ինչքան կարելի է լաւ խմոր, դիր սեղանի
վերայ և ծածկիր անձեռոցով: Երբ բարձրանայ,
դարձեալ լաւ հունցիր, կարելի է մի խնձորա-
շափ կտրել խմորից, մնացեալից հացադունտ
շինիր, դիր մէշը իւղով օծած թաւի վերայ.
վրայից՝ կտրած խմորից երկու կտոր դիր խա-
շածե, վրէն կիսած նշեր դիր, թող բարձրա-
նայ, յետոյ վերեկից ջրի մէջ հարած գեղնուց
քսիր, փշրած սուխարի ցանիր և $\frac{3}{4}$ ժամի շափ
թխիր հնոցի մէջ: Խմանալու համար թխուած
է թէ չէ պէտք է մէշը փայտիկ ցցել և հա-
նել, եթէ մարսուր է ու չոր՝ ինչանակի որ կու-

նիր. այսուհետև մէջը 20 գրվ. լաւ մաղած ա-
լիւր արա ու խմոր հունցիր. չունցելիս արա
մի ծեծած վանիլ, լիմոնի կաթիլ, բարակ աղած
աղ, 20 կոպէկի էլ թրջած զաֆուան:

Մի մեծ ամանի մէջ 2 բաժակ ջուր ածա
և մէջը խառնիր $\frac{3}{4}$ գրվ. թթխմոր, ալիւրով
շաղախիր և դիր տաք տեղ, որ բարձրանայ:

Մի ուրիշ ամանի մէջ ածա 6 բաժակ
եռցրած կաթ, 2 բաժակ էլ ալիւր և շաղա-
խիր ու դիր որ քիշ սառչի: Յետոյ թթխմորը
ածա սորս մէջ, խառնիր և երբ բարձ-
րանայ՝ խառնիր մեծ տակառի խմորի մէջ և
հունցիր այսպէս. վերցրու 4 գրվ. գոլ իւղ կամ
կարագ. ձեռքդ մէջը թաթախիր և խմորը հուն-
ցիր և այսպէս շարունակէ $1\frac{1}{2}$ ժամ հունցել,
մինչև որ բոլոր իւղը հատնի: Խմորի մէջ նուշ
և քշմիշ խառնիր, ծածկիր խմորը և տաք տեղ
դիր. երբ բարձրանայ, այսպէս որ տակառը
լցուի, կաղապարների ներսից իւղ քսելով՝ ամեն
մէկի մէջ 5 կամ 6 գրվ. խմոր գունտ գունտ
անելով՝ լցրու մէջը, մաքուր ծածկիր և թող
որ դարձեալ բարձրանայ. Յետոյ դիր հնոցի
մէջ, ուր 1 ժամ թող, թխուելիս կաղապարի
մէջ կիսատ տեղն էլ կբարձրանայ. Թխուելիս
շուտ շուտ նայիր, որ շայրուի: Հանելուց յետոյ
տաք տեղ դլորիր, որ հաւասար կերպով սառչի:

208. ՆԵՐԿԱԾ 201. ԶՈՒ ՆԵՐԼՈՒՄ ԻՆ
ՊԱՆՎԱՊԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ.

ա. Զուն պէտք է մաքուր լուանալ, չորա-
ցնել, եփել և սառցնել. յետոյ փաթթել գու-
նաւոր թղթերի մէջ, որոնց 10-ը 5 կոպէկով
ծախուռմ է ամեն տեղ և հրահանգն էլ տպած
է վրէն:

բ. Ծախուռմ են մի տեսակ կարմիր հեղուկ
չիշը 10 կոպէկով: Մի բաժակ ջրի մէջ լցրու
դորա քառորդ մասը: Զուն եփիր, տաք տաք
հանիր պղնձից, խսոյն մաքրիր ու ձգիր այդ
հեղուկի մէջ ու հանելով դիր ափսէի վերայ:
Ինչըան հեղուկ գոյնից աւելացնէր՝ այնքան մոյդ
գոյն կստանան ձուաները:

գ. Վաճառում են ամեն տեղ ներկի փոշի
ամեն գոյնի. 2 գդալ սառը ջրում պէտք է լու-
ծել այդ մի պարկ փոշին, վրէն աւելցնել
մի շափ տաք ջուր. առաջուց եփած ու
մաքրած ձուաները թիշ քիշ դարսելով՝ մէջը
2 – 3 րոպէ թողէր ու հանեցէր:

Թէթի ԵՒ ՍՈՒՐՃԻ ՊԱՔԾԻՄԱՑՆԵՐ:

209. ՊԱՍՈՒԱՅ ԲՈՒԼԱՒ: Պատրաստել №
194.ի խմոր, բուլկի պատրաստել և թխել:

210. ԴԱԼԾԱՎ ՔԱՂՅՐ ՊԻՐՈԳ: (Պասուայ

կամ ուտիսուայ): Վերցրու 6 ձու, կոտրտիր փայտէ ամանի մէջ, ածա վրէն 3 բաժակ բաղցը ջուր, այսինքն հետը $\frac{1}{2}$ բաժակ ջարդած շաբար, 1 լմպանակ (քյոմքա) օղի, $\frac{1}{2}$ թէյի գդալ աղ, այս բոլորը լաւ խառնիր, հետը քիչ քիչ խառնիր $4\frac{1}{2}$ գրվ. մաղած ալիւր, հարիր ինչքան կարելի է լաւ, մինչև խմորն սկսուի հարիչին չկպչել:

Յետոյ սեղանի վերայ ալիւր ցանելով խը- մորը շուռ տուր վրէն, 60 մասն արա, նոցա- նից հացիկներ շինիր. յետոյ ամեն մէկ հացիկը գրտնակով բաց արա ալիւր ցանելով, չայի տակի չափ, այս բացարած խմորները դարսիր մէկու վերայ, մէջերը բաւական ալիւր շաղ տալով, որ մէկ մէկու չկպչին: — Մի մեծ կլոր սկուտղի վերայ իւղ քսիր, վերցրու մի կտոր խմորը, ձեռքի մէջ աւելի բաց արա, դիր ըս- կուտղի վերայ, ծայրերը կպցրու, վրէն իւղ քսիր, նորա վերայ դիր միւս խմորը, իւղ քսիր և այլն:

Եւ այսպէս մէկմէկու վերայ դարսիր 25 հատ, քսանեհինգերորդի վերայ քաղցրաւենի ածա 1 գրվ. կամ պակաս, առանց աւելորդ հիւթի, վերջին խմորի ծայրերը վերևը ամրացրու, այնպէս որ քաղցրաւենին չթափուի, և յետոյ այս քաղցրաւենու վերայ դիր էլի 35 հատ

բաց արած խմոր, ամեն մէկին իւղ քսելով և ձգելով սկուտղի մինչեւ ափերը:

Սկուտղի ափերից աւելորդ խմորները կը- տրտիր, իւղ քսիր, դիր քիչ տաք հնոցի մէջ կէս ժամի չափ, որ թխուի: Ճաշի բերելիս կարելի է սուր զանակով ծայրերն ուղղել և շաբար ածել վրէն: Այս պիրոզը կարելի է ե- րեկոյին պատրաստել, դնել սառը տեղ և միւս օրը թխել:

Այս պիրոզի վերայ գործ է գրւում 5 գրվ. ալիւր, 6 ձու, $\frac{2}{3}$ թէյի գդալ աղ, $\frac{1}{3}$ գրվ. շաբար, 1 լմպանակ օղի, $1\frac{1}{2}$ բաժակ բաղց- րաւենի: Պասուայ համար ձուի փոխարէն ջուր են անում:

211. ԲԻՍԿԱՏԻ ՊԻՐՈԳ ԼԻՄՈՆՈՒ: 5 ձուի գեղնուցը 1 բաժակ շաբարի մէջ պէտք է հա- րել մինչև սպիտակելը, վրէն ածել $\frac{1}{2}$ լիմոնի քամուքս, 4 սեղանի գդալ (ոչ շատ լիքը) վետ- նախնձորի ալիւր, լաւ խառնել, 2 սեղանի լիքը գդալ խոշոր ալիւր անել, դարձեալ խառնել, աւելցնել 5 հարած սպիտակուց, քիչ էլ խառ- նել, ածել հարթ թիթեղեայ կաղապարի մէջ, որի վերայ նախապէս քսում են կարագ և սու- խարի են ցանում: Կէս ժամի չափ դնել հնոցի մէջ: Մի փայտի փոքրիկ ձողով պէտք է տես- նել հում է թէ եփած. եթէ ձողին խմորը չէ

կպչում՝ կիշանակի պատրաստ է։ Հնոցից հանելով պէտք է շուռ տալ սկուտղի վերայ։ Այս բիսկիթը գործ են դնում թէյի կամ սուրճի հետ կաթով կամ սերով։

212. Խճջուրի Պիրոգ։ 1 ձու, 1 սեղանի գդալ սեր, $\frac{1}{2}$ թէյի գդալ աղ, մի կիսատ բաժակ ալիւր ($\frac{3}{4}$ բաժակից աւելի), $\frac{1}{2}$ գդալ իւղ, հունցել, խմորը չորս մասն անել, ամեն մէկը խիստ բարակ բաց անել մի ափսէի մեծութեան։ Առաջին կտորը դիր իւղ քսած թափ վերայ, որի մեծութիւնը նոյնպէս պէտք է ափսէի չափ լինի, վրէն իւղ քսիր, խնձորի մի մասը դիր վրէն առանց կճպելու, այլ միայն գուլը հանած, միւս խնձորներն էլ բարակ բարակ վրէն կտրտելով (ընդամենը $1\frac{1}{2}$ գրվ. խընձոր)՝ շարարով շաղ տուր ($\frac{1}{2}$ գրվ. շարար)։ Խնձորի վերայ դիր միւս բաց արած խմորը, նոյնպէս երկու կողմից իւղ քսած, որի վերայ ընդամենը $\frac{1}{4}$ գրվ. իւղ կերթայ։

Այսպէս պէտք է անել և բոլոր խմորի կտորները, վերինին նոյնպէս քսել գոլ իւղ։ Դիր շատ տաք հնոցում։ Հինց որ հիւթը ծոռէ, շուտ շուտ լցրու պիրոզի վրայից։ Պիրոզը պէտք է թողնել հնոցում այնքան, մինչև որ հիւթը եփուելով շարար դառնայ։

213. ՆԵԿ ՊԱՔՍԻՄԱՏ. Վերցրու $\frac{1}{2}$ գրվ.

քաղցր նուշ, աւելցրու 10 հատ դառը նուշ և կճպիր եռցրած ջրի մէջ և պլիտի վերայ թիշ չորացրու։ Յետոյ աւելցնելով 5 կոպէկի վարդաջուր՝ մանր ծեծիր։ Վերցրու 2 ձուի սպիտակուց, $\frac{1}{2}$ գրվ. շարարաւազ, բոլորը միասին խառնիր մի ամանի մէջ։ 3 ձուի սպիտակուց փրփրացրու և խառնիր հետը. եթէ շատ ջրալի լինի՝ հետը ալիւր խառնիր։ Թաւի վերայ ձէթ քսիր, ալիւր ցանիր և շինած խմորից կտոր կտոր դիր վրէն, իսկ վերինից ածակտրտած նուշ և դիր հնոցի մէջ 15 բոպէի չափ՝ եթէ տաք է հնոցը, իսկ եթէ շատ տաք չէ՝ 20 բոպէի չափ։ Վերցնելիս դանակով պէտք է վերցնել։

214. ՔԵՎՑՐ ՊԻՐՈԳ։ $\frac{1}{2}$ բաժակ իւղ հարիր ձիւնի վերայ դրած խորը ամանի մէջ մինչև սպիտակի։ Մի ուրիշ ամանի մէջ հարիր $\frac{1}{2}$ բաժակ, այսինքն 6 ձուի գեղնուց, $\frac{1}{2}$ բաժակ մաղած շարարի հետ մինչև սպիտակի, յետոյ լաւ խառնիր իւղով, շաղ տալով մէջը $\frac{1}{2}$ բաժակ ամենալաւ խոշոր ալիւր և վերցապէս խառնիր նորա հետ մնացած սպիտակուցը, փրփրացնելուց յետոյ. զգուշութեամբ խառնիր վերինից ներբեկ, ածա թղթէ կամ թիթեղեայ կաղապարի մէջ, որ վաղօրօք պէտք է իւղով օծել ու սուխարի ցանել. դիր հնոցը, կէս ժա-

մի չափ: Երբ պատրաստ լինի՝ հանիր սկսուղի
վերայ:

215. ԶԱՆԴԿՈՒԽԵՆ: $\frac{1}{4}$ դրվ. կարագ խո-
րը ամանի մէջ պէտք է հարել մինչև սպիտա-
կելը, մէջը $\frac{1}{2}$ բաժակ շաքար լցրու, հարիր,
աւելցրու 1 ձու, խառնիր, լցրու $\frac{1}{2}$ դրվ. խո-
շոր ալիւր: Համի համար 3—4 կաթիլ լիմոնի
իւղ արա, լաւ հունցիր, որ պինդ զանգուած
դառնայ: Այս խմօրը մանր կտրտիր, իւրաքան-
չիւր գունդը տափակացրու, դարսիր երկաթէ
տախտակի վերայ առաջուց ցանելով վրէն ա-
լիւր, վրէն մանր կտրտած $\frac{1}{4}$ բաժակ քաղցր
նուշ արա, դիր ցուրտ տեղ կամ սառցով ա-
մանի մէջ, յետոյ խսկոյն դիր տաք հնոցում
10—15 րոպէ: Երբ բիշ կարմրի՝ խսկոյն զգու-
շութեամբ հանիր դանակով:



Զ. ՄԱՍԻ

ՊԱՃԱՐ

216. ՔԱՂՑԲ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱ-
ՀԵՍՏԻ ՆԻԹԵՐ: Հիլ, դարշին, լիմոնի և նարի-
ջի չոր կճեպ, դաւը նուշ, քաղցր նուշը չորաց-
րած, բոված և աղած, զաֆոան, վարդի իւղ,
լիմոնի իւղ:

217. ՀԱՄԵԴ ՆԻԹԵՐ ՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ:
Ջաղ (Մաշեանայ օրքեր) և այրած շաքար:

218. ՀԱՄԵՄՆԵՐ ԵՒ ԽՈՏԵՐ. Պղպեղ և
բահարի, վլուխ սոխ, սխտոր:

219. ԿԱՐՄԻՐ ՊՈՐԻՆՁԱՆԻ ՊԻՒՐԻ (ՊՈ-
ՄԱԴՈՐ): Հասածները, այսինքն կարմիր պոմա-
դորը կտրտիր, միջի ջուրն ու սերմերը դէն
ածա, մնացորդը ածա պղնձի մէջ, մի քանի
անգամ եփ տուր առանց ջրի իւր հիւթի մէջ,
մաղի մէջ քամիր և քամուածքը, որ «պիւրէ» է
կոչւում, նորից եփիր, մինչեւ թանձրանայ,
շարունակ խառնելով, որ շայրուի: Երբ սառչի՝

լցրու շիշերի մէջ, երեսին պրովանսի ձէթ ածա, պինդ ծածկիր և չոր ու սառը տեղ պահիր: 4 հոգրու համար արգանակի մէջ պէտք է անել մի փայտէ լիրը գդալ: Կարելի է և իւր զով ու սերմերով եփել:

220. ԿԱՐՄԻՐ ՊՈՐԻՆՁԵՆ ՉՈՐԱՑՐԱԾ: Հասածները մէջերից կէս արա, վրէն աղ արա, փոխիր արեի տակ որ լաւ չորանայ: Գործ դնելիս վերցրու մի փոքր ափսէի չափ, Յ ժամ թրջիր, զուրը մի երկու անգամ փոխելով. եփիր, բամիր և բամուրսը արա արգանակի մէջ:

221. ԱՂԴՐԱԾ ՎԱՐՈՒՆԳ: Ամառք քաղելուց յետոյ վարունգն իսկոյն պէտք է աղաջրի մէջ դարսել: Աշունքին վարունգը հանում են աղաջրից, մի երկու օր ածում են պարզ ջրի մէջ, որ աղը դուրս գայ և նորից դարսելով ամանի մէջ՝ վրէն ածում են կամ միայն քացախ և կամ նեխուրի եփած ջուրն ու քացախ:

222. ԹԹՈՒ ՎԱՐՈՒՆԳ: Փոքրիկ տակառի մէջ պէտք է ածել մայրի, ալուբալի ծառի և հաղարճի տերեններ, սամիթ և սխտոր, վրէն մէկ շարք դարսում են նոր քաղած վարունգ ուղղահայեաց գրութեամբ, վրէն դարձեալ յիշեալ կանաչեղէնը, դարձեալ վարունգ մինչեւ տակառը կլրցուի: Իսկոյն տակառը ծածկելու է 2 փոքր ծակ ունեցող խուփով, որոնցից մէ-

կից պէտք է օդը դուրս գայ, միւսի մէջ պէտք է դնել ձագառը և աղաջուր ածել, որ այսպէս է պատրաստում: $2^{1/2}$ դոյլ (վեգրօ) գետի ջրի մէջ խառնում են 6 բաժակ աղ և 1 գդալ բորակ (սելիտրա). յետոյ բերանը պէտք է խցել:

223. ՄԱՆԱԿՆԵԽ: Յ գդալ չոր մանանեխին 1 գդալ շաբարաւազ պէտք է անել և 1 թէյի գդալ աղ, շալախել սառը քացախով, մի կողմից տրորել, ինչքան շատ այնքան լաւ:

224. ՊՏՎ-ՕՎՐ (հալիւկա): Ալուբալին, հաղարճը, մորին միասին կամ իւրաքանչիւրն առանձին ածա մեծ շշի մէջ, մինչեւ բերանը լրցրու մի շշաչափ մաքրած օղի, բերանը շորով ծածկիր, կապիր, դիր լուսամուտում մի ամբողջ ամիս, և ամեն օր զգուշութեամբ շիշը շարժիր: Յետոյ այս օղին քամիր մի քանի ծալ մաքուր շորի մէջ, և ածա շիշերի մէջ: Ամեն մի շշի համար վերցրու $1/4$ շիշ ջուր և ովկ կուզի $1/4$ կամ $1/2$ զրի. կոտրտած շարար, եռցրու, զգուշութեամբ լցրու այս օշարակի մէջ բոլոր նախկին լցրած շիշերը, մի անգամ եփ տուր, լրցրու քարէ ամանների մէջ, սառցրու, ածա շիշերի մէջ, բերանները փակիր և կպրիր: Մնացորդ պտուղների վերայ դարձեալ նոյնքան օղի լցրու, Յ ամիս թող այնպէս, և նոյն ձեռվ շաքարով պատրաստիր: Իսկ պտուղների վրայ էլ

ձագառով եռցրած ջուր լցրու զգուշութեամբ
հինց շշի մէջտեղը, որ շիշը շճաքի, Յ ամիս
այսպէս պահիր, ու նոյն ձևով վարուիր և սո-
րա հետ:

225. ՍՈՒՐՃ: Մի գրվ. սուրճի հետ խառ-
նում են $\frac{1}{4}$ – մինչև 1 գրվ. ցիկօրիա: Աւելի
լաւ է սուրճը՝ ծածկած բովիչի, քան թաւի մէջ
բովիլ, և պէտք է շարունակի շարժել: Երբ սուրճը
մոյգ-շափանակի դոյն ստանայ և թեփ սկսի
դուրս տալ, կնշանակի պատրաստ է, պէտք է
զգոյշ լինել որ չայրուի: Ինչքան բարակ աղաք
այնքան լաւ է: Ցիկօրին առանձին պէտք է
բովիլ և խառնել սուրճի հետ և նորան էլ
նոյնպէս պէտք է աղալ: Մի դաւաթ սուրճի
համար վերցնում են մի թէյի գդալ աղած խառ-
նուրդ: Սուրճը կախում են սրճամանում բրդէ
պարկի մէջ և վրէն լցնում եռցրած ջուր ու
դնում պլիտի վերայ: Երբ եռ գայ՝ պէտք է
յետ դնել և մի գդալ սառը ջուր ածել վրէն:
Երբ սուրճը ըիշ նստի նորից պէտք է պլիտի
վերայ դնել: Երբ եռ գայ՝ նորից յետ դնել և
մի գդալ սառը ջուր լցնել: Ելի եռցնել, յետ
դնել, որ նստի և պատրաստ է: Սուրճի հետ
գործ է զրում կաթ ու սեր:

226. ԱՐԵՒԱԾԱՂԱՌՈՒ ՍՈՒՐՃ: Սուրճը շատ
աւելի համեղ է լինում, եթէ մի գրվանքա

սուրճի հետ խառնեն 1 կամ $\frac{1}{2}$ գրվ. արեւա-
ծաղկի բոված սերմը:

227. ԳԱՐԵ ՍՈՒՐՃ: Պէտք է վերցնել ըս-
պիտակ և անպոչ գարին, որ կլոր է լինում,
բովիլ ինչպէս սուրճը, աղալ և եփել սուրճ
պատրաստելու եղանակով:

228. ԽՈԶԿԱՎԱԽՆԵ ՍՈՒՐՃ: Ջատ հասած
երկարաւոն խողկաղինը ժողովելով (գորա կը-
լորից աւելի լաւ են) գանակով մարրում են
կանաչ կճեպներից, կիսում են երկաբութեան
վերայ և ամեն մի կէսն էլ երկու մասն անում:
Նոյն երեկոյին ածում են եռցրած ջուռմ: Միւս ա-
ռաւաթ ջուրը դէս են ածում և թոյլ հնոցի
մէջ չորացնում: Պահում են պարկերի մէջ չոր
տեղ, յետոյ բովում են ինչպէս սուրճ, այնպէս
որ ոչ բոլորովին բաց լինի և ոչ էլ այրուի:
Որովհետեւ խողկաղինը շուտ չէ բովում, ուստի
և պէտք է կոտրելով մի քանիսը՝ տեսնել բո-
ված է թէ չէ: Սաոցնել, աղալ և եփել ինչ-
պէս սովորաբար եփում են սուրճը:

229. ԱԼՈՒԲԱՎԵ ԽՄԻ2Ք: Ալուբալին մար-
րիր, լուա, ածա մեծ շիշի մէջ, մի երես ալու-
բալի, մի երես շաքարաւազ և այսպէս մինչե
շշի կէսից աւելի: Բերանին չիրիլա կապելով
մի ամիս դիր արեի աակ: յետոյ հիւթը մա-
քուր քամիր և կստանաք մի պատուական խմիչք:

230. ՀԱՂԱՐՃԻ, ՄՈՐՈՒ ԵՒ ԵԼԱԿԻ ՔԱՂՅ-
ԹԱՒԵՆԻ: Այս պտուղներից քաղցրաւենիք եփե-
լու համար պէտք է մաքրել և ամեն մի բաժակ
մաքրած պտուղի համար վերցնել 1 բաժակ
կոտրտած շաքար: Ջաքարն ածա պղնձէ լագա-
նի մէջ և իւրաքանչիւր երեք գրվ. շաքարի վե-
րայ ածա $1\frac{1}{2}$ —2 բաժակ զուր, որ շաքարը
չորվ կշտանայ և էլ չծծէ: Յետոյ լագանը դիր
կրակի վերայ. երբ եռ գայ, պտուղներն ածա
մէջը, լագանը շարժելով երեք անգամ հէնց
կրակի վերայ և ամեն անգամից յետոյ գդալով
քափը քաշիր: Յետոյ եփիր թոյլ կրակի վերայ,
որ պտուղները թթւութիւնը կորցնեն և հումի
համ չունենան:

Երբ պատրաստ լինի՝ ածա արգանակի ա-
մանի մէջ, սառցրու, լցրու ապակէ անօթների
մէջ, բերանը թղթով և փամփուշտով ծածկիր:
Պիրոգների համար այս քաղցրաւենին պէտք է
խիտ լինի, այսինքն դրա օշարակը սովորական
քաղցրաւենիքի օշարակից աւելի բիշ պէտք է
լինի:

231. ԽՆՉՈՐԻ: ԽՆՃՈՐՆԵՐԸ մաք-
րիր, խորովիր և տաք տաք քերելով քամիր
մաղի կամ քամիշի մէջ: 2 բաժակ այդպէս ըս-
տացուած խնճորին պէտք է անել $1\frac{1}{2}$ —1 բա-
ժակ շաքարաւագ կամ սպիտակ մեղր, եփիր

այնքան, մինչև որ բաւականին թանձրանայ,
շարունակ գդալով խառնիր, որ չայրուի: Երբ
սառչի, նորից ածա մի արծնապակած ամանի
մէջ ու մի բիշ ժամանակ դեր թոյլ հնոցի մէջ,
որ բիշ երեսը թխուի, որով պահպանւում է
բորբոնելուց: Այս տեսակ քաղցրաւենին գործ
է գրւում պիրոգների, բլինի և ալագիայի հա-
մար:

232. ԱԼԳԻԲԱԼԻ ՊԻՏՐԻ: Մի հողի աման
լցրու հասած ալուրալով, շորով բերանը ծած-
կիր. վրէն խմոր քսիր և հացերը հանելուց յե-
տոյ դիր հնոցի կամ փռան մէջ: Միւս օրը
հանիր, շուռ տուր խախալի վերայ, որ հիւթը
գուրս ծորէ, յետոյ տրորիր պտուղները: Տրո-
րած պիւրէն շափելով՝ իւրաքանչիւր 2 բաժա-
կին 1 բաժակ շաքարաւագ արա, համի համար
կարելի է միքանի ալուրալու աղած կորիզներ
աւելցնել (3—6 կորիզ ամեն մի բաժակի հա-
մար), եփիր, մինչեւ որ թանձրանայ, սառցրու,
ածա հողէ ամանի մէջ, դիր հնոցի մէջ, հա-
ցերը հանելուց յետոյ, մի փոքր ժամանակ, այն-
քան որ երեսը թխուի: Թղթի մէջ փաթթիր
և սառը տեղ պահիր: Սա գործ է գրւում պի-
րոգների, բլինների և ալագիայի միջուկի համար:

233. ԶՈՐՑՐԵՎԾ ՄՈՐ: (մալինա): Ժողովիր,
ածա տապակի վերայ, դիր ոչ շատ տաք հնո-

ցում, որ շորանայք եթէ հարկ լինի կրկնիր
այս մի բանի անգամ։ Դորան գործ են դնում
քաղցրաւենիք շներու, խմում են իբրեւ ըրտ-
նաբեր դեղ և այլն։

234. ԿՄՈՒՆԻ ԿՃԵՊ. Թէլի համար լիմոնը
կտրտելուց առաջ՝ սուր մաքուր դանակով կը-
տրտիր վրայի դեղին կաշին շատ բարակ շեր-
տով, առանց սպիտակ մասերի, չորացրու լու-
սամուտում, տաք սենեկի մէջ և չոր տեղ պա-
հիր։ Դորա աղածը գործածական է կուլիչի,
քաղցր բուկու ու պաքսիմատի համար, իսկ
կտոր կտոր դցում են կօմպօտի մէջ։



Հ* ՄԱՍՔ

ՄԻ ՔԸՆԻ ՑՆՑԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

235. ԱՐԳԱՆԱԿ ԵՓԵԼՈՒ ԿԱԹՍԱՆ. Ոչ մի
տեսակ արգանակ չպէտք է եփել պղնձէ ամա-
նի մէջ, որովհետև շատ վնասակար է առող-
ջութեան համար, այլ անշուշտ չուզունէ արծ-
նապակած կաթսայի մէջ, որ միշտ պէտք է մա-
քուր լուանալ։ Տապակել, զետնախնձոր եփել և
այլն նոյնպէս պէտք է այդ տեսակ տարբեր մե-
ծութեան ամաների մէջ լինի։

236. ԶՈՒԳՈՒՆԻ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՄԱՔՐԵԼՅ.։
Եթէ դոքա սեանան, գնիր 5 կոպէկի քարի
կիր, ցանիր չուզունի մէջ, լցրու ջրով, եռցրու,
մինչև որ չուզունը սպիտակի. յետոյ յետ դիր,
ջուրը սառցրու և լցրու շիշերի մէջ ապազյ
գործածութեան համար, իսկ կաթսան մաքուր
ջրով մի քանի անգամ լուա։

237. ՓԱՅՏԵ ԱՄԱՆՆԵՐԻ ՄԱՔՐԵԼՅ.։ Կեղ-
տոտ տակառներն ու փայտէ ուրիշ ամանները
մաքրում են հետեւեալ եղանակով. պէտք է բո-

լորովին նոր կիր չըի մէջ ածել, նորանից թանձը զանգուած պատրաստել, բսել տակառի ներսի պատերին, դուրսը դնել, բայց ոչ անձրեսի ու խոնաւութեան տակ: Մի քանի օրից յետոյ կիրը լուա, քերելով մաքրիր, աւազով լուա, լաւ ողողիր, դարձեալ տաք ջրով լուա, մի գոյին Յ գդալ անուշաղրի սպիրտ խառնելով և ողողիր մաքուր ջրով:

238. ՊՂՆՉԵՏԻ ՍՄԱՆՆԵՐԻ ԵՒ ԻՆՔՆԱԵԹԻ ՄԱՔՐԵԼԸ: Առաջ պէտք է ճրագուր բսել, իսկ յետոյ ցանել վրէն «պուցպուլվէր» փոշին, նորանով լաւ մաքրել և չորացնել: Կամ գնիր 10 լուսուկ կրօկուս կարմրագոյն փոշի (այսքանը մի ամբողջ տարի բաւական է): Այս կրօկուսը կոտուկ կաշուէ (զամշ) կտորով քսիր, դրափափուկ կաշուէ (զամշ) կտորով քսիր, դրափափուկ մաքրիր ամբողջ պղնձէ ամանը, նորարծաթը, արծաթը, մինչև անգամ պուղպատը: Մաքրելուց յետոյ՝ մաքուր՝ յատուկ դորա համար պահուած սրբիչով սրբիր: Իսկ ամենից հասարակ և լաւ եղանակը՝ գետնախնձորի ջրով մաքրելն է, այն է երբ շմաքրած գետնախնձոր լինիս է, այն է երբ շմաքրած գետնախնձոր մինիս էփելիս, ջուրը առանձին ամանի մէջ ածած, տաք տեղը ջուրը ըիշ թթուացրու և դրանով մաքրիր պղնձէ ամանները և մինչև անգամ արծաթը: Լաւ է նոյնակս տաք ջրով մաքրելը, մի գոյթը: Լաւ է նոյնակս տաք ջրով մաքրելը, մի գոյթը: Եթե կդալ անուշաղրի սպիրտ խառնելով:

239. ԴԱՆԱԿԻ ՈՒ ՊԱՏԱՌԱՔԸՎԻ ՄԱՔ-ՐԵԼ: Փայլունկի (սուզա), ապիստած ձկան և սոխից առաջացած անախսորժ հոտը ոչնչանում է, երբ մարրում ենք մոխրի և մոխրաջրի խառնուրդով: Թարմ փայլունկից երբէք հոտ չէ մեռում դանակի վերայ, այնպէս որ նոցաթարմութիւնը հէնց այս եղանակով կարելի է իմանալ:

240. ՊՈՂՊԱՏԻՑ ԺԱՆԿԸ ՀԵՆԵԼՈՒ ՄԱ-ՔԸՑ: Սկիպիոնարի խոլ և սպիտակ մեղրամու հաւասար շափով տաքացրու, խառնիր և ժանգուած տեղերը սրբիր:

241. ԶՈՒՏԻՑ ՍԵՒԱՑԱԾ ԳԴԱԼՆԵՐԻ ՄԱ-Ք-ՐԵԼՈՒ ԶԵՒՔԻ: Մաքրելու է զամշով (փափուկ կաշի), խիստ բարակ մոխրով, նոյնակս և օղելառն կաւճով:

242. ՇԻՃԵՐԻ ՄԱ-ՔՐԵԼԸ: Նոցա մէջ պէտք է ածել շաքարի թղթէ մանր կտորներ կամ մի բուռը գարի, կիսով չափ ջրով լցնել, բերանը խցել, ողողել, մինչև որ կեղտը վեր գայ: Կամ վերցրու մի մեծ, մաքրած հում գետնախնձոր, մանր կտրտիր, ածած շչի մէջ, լցրու մէջը $\frac{1}{4}$ չիշ ըիշ բացախսախառն ջուր, ամեն կողմից ողողիր, ջուրը դէն ածած և մաքուր ջրով ողողիր:

243. ԽՈՀԱՆՈՑԻՑ ՀԱՍՏՐԱԿ ՍԵՂԱՆՆԵՐԻ ՄԱ-ՔՐԵԼԸ: Երաքանչիւր անգամ կերակուրները

վերջացնելուց յետոյ, պէտք է սեղանները լուսնալ
աւազով ու սապնով, իսկ յետոյ մաքուր լուս-
նալ ջրով։ Կամ լուսնալ առաք ջրով, մի վեդ-
րօի մէջ Յ գդալ անուշադրի սպիրտ խառնած։

244. ԶԱՆՑՁԱՆ ԻՐԵԲԻ ՄԱՔԻԵԼ. ԾՐԵՔ
սեղանի գդալ անուշադր խառնելով մի վէգրօ
տաք ջրի մէջ՝ ամենալաւ հեղուկն է դռների ու
լուսամուտների շրջանակները լուսալու համար,
դռների մետաղեայ փակիչները, վառարանների
դռնակները, ոսկէ ու արծաթէ իրերը ու մին-
չև անգամ աղամանդները մաքրելու համար:

245. ԼՈՒՍԱՄՏԻ ԱՊԱԿՈՒ ՈՒ ՀԱՅԵՎՈՒ
ՄԱՔՐԵԼԸ: Ամենից լաւ է օծել զրի հետ թան-
ձըր շաղախսած կաւճի փոշչիով: Զորանալուց յե-
տոյ պէտք է սրբել լրագրի չոր թղթով:



8 Ա Ն Կ

U. S. U. L.

ચ અ ફ અ દ અ

ՈՒՏԻԱԽԵՎ ԵՒ ՊԵՍՈՒՐԵՎ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

19.	Եփած գետնախնձոր իւղով և մաղթա-	
	նոսով.	8
20.	Եփած գետնախնձոր իւղով և ձուռով.	—
21.	Գետնախնձոր կաթնի սօուսով.	—
22.	Եփած գետնախնձոր սունկի սօուսով.	9
23.	Գետնախնձորի պիւրէ երիշկով.	—
24.	Տապակած գետնախնձոր.	—
25.	Եղ ու ձուռով էրիշտայ.	—
26.	Կաթնով մաննյա կրուպա.	—
27.	Կաղամբով պիրոդ.	10
28.	Բրնձով ու ձուռով պիրոդ.	11
29.	Մսով, բրնձով ու ձուռով պիրոդ.	—
30.	Թարմ սունկով պիրոդ.	—
31.	Տապակած և խորոված ձկներ.	12
32.	Կատլէտ.	13
33.	Եղան ուղեղը խորոված.	—
34.	Խմորիկներ. (ՅԱԽԱ).	14
35.	Սօդայով խմորիկ.	15
36.	Խմորիկ միայն ալիւրից.	—

Բ. ՄԱՍԼ

ՃԸԾԻ ԵԹԸՆԻՆ ՏԵՍԱԿ ԿԵՐԸԿՈՒԲԻՆԵՐ

Ո Ւ Տ Ի Ս Ո Ւ Ա Ց

1. ՄՄԵ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ

37.	Մսէ արգանակներ պատրաստելն առ	
	հասարակ.	16
38.	Տաւարի միս.	17

39.	Տապակաների միս.	17
40.	Ի՞նչպէս պէտք է իմանալ բուլիօնը,	
	գետնախնձորը, տապական և այլն	
	պատրաստ է թէ ոչ:	18
41.	Արմաիք, գետնախնձոր և կանաչի մաք-	
	րելու եղանակը:	—
42.	Արմտիքով և գետնախնձորով մսաջուր.	—
43.	Արմտիքով, գետնախնձորով, շաղգամով	
	և կաղամբով մսաջուր.	19
44.	Պիրոժքով մսաջուր.	—
45.	Արտասահմանեան արգանակ.	20
46.	Գետնախնձորով և բրնձով կամ կրու-	
	պով արգանակ.	—
47.	Մակարոնով և գետնախնձորով արգա-	
	նակ:	—
48.	Էրիշտայ.	21
49.	Գետնախնձորով արգանակ.	—
50.	Թարմ սունկով արգանակ.	22
51.	Բորշ.	—
52.	Թարմ կաղամբով չչի.	—
53.	Թթու » »	23
54.	Կանաչ չչի եղինձով.	—
55.	Կարմիր պորինձանով արգանակ.	24
56.	Գառան մսով արգանակ.	—
57.	Հաւի » »	—
58.	Հնդուհաւի ոտ ու գլխով արգանակ.	—
59.	Հնդուհաւով արգանակ.	25
60.	Բագով արգանակ.	—
61.	Սագով » »	—
62.	Հորթի մսով արգանակ.	—

63.	Ճակնդեղի	տերեւով	արգանակ.	.	25
64.	Մակարոնով	արգանակ.	.	.	—
65.	Արտալայ.	.	.	.	26
66.	Խաշ.	.	.	.	—
67.	Վառեկով	և	կարմիր	պորինձանով	ար-
	գանակ.	.	.	.	27
68.	Բողաթմայ.	.	.	.	—
69.	Սերկելով	միս.	.	.	—
70.	Գառան	մսով	չերթմայ.	.	28
71.	Հաւով	չերթմայ.	.	.	—
72.	Քիւֆթա	բողբաշ.	.	.	—
73.	Բընձով	շորփայ.	.	.	29
74.	Կաթնով	և	մանցա	կրուպով	արգանակ.
75.	Հիւանդի	մսաջուր.	.	.	—
76.	Խսկական	բուլիօն.	.	.	30
77.	Արմաիքով	արգանակ.	.	.	—

2. ԶԿԱՆ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ

78.	Օրագուլի	արգանակ.	.	.	31
79.	Ասետրին	ձկան	արգանակ.	.	—

3. ՊԱՍՈՒԱՅ.

80.	Աջափսանդալ.	.	.	.	—
81.	Սիսեռի	արգանակ.	.	.	32
82.	Սունկի	արգանակ.	.	.	—

ԳՐ. ՄԸԾՈՂ

ՃԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԿԵՐԱԿՈՒԹՅԵՐ

1. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ

83.	Եփած	տաւարի	միս	.	.	.	33
84.	»	»	»	տապակած	սունկով.	—	
85.	»	»	»	գետնախնձորով	և		
				մսաջրի	սուլսով.	,	
86.	Եփած	տաւարի	միս	կաթնի	սուլսով.	—	
87.	»	»	»	Եփած	գաղարով.	.	34

2. ՏԱՊԱԿԱԾ ՈՒ ԽՈՐՈՎԱԾ

88.	Տապակած	տաւարի	միս	.	.	.	—
89.	»	»	»	.	.	.	—
90.	Խորոված	»	»	.	.	.	35
91.	Խորովածի	մի	ուրիշ	տեսակը	.	.	—
92.	Տապակած	հորթի	միս	.	.	.	—
93.	Եփած	հորթի	միս	սպիտակ	սուլսով.	.	—
94.	Հորթի	և	տաւարի	լեզու.	.	.	36
95.	Տապակած	գառան	միս	.	.	.	—
96.	Տապակած	հորթի	միս	կամ	տաւարի		
				սուկի	ձուով.	.	37
97.	Տապակած	վառեկ	ձուով.	.	.	.	—
98.	Բիւֆշտէքս	—
99.	Ոսկրով	կատլէտ	—
100.	Հորթի	ու	ու	գլուխը	ձուով	տապա-	
						կած.	38

101.	Խորոված խոճկոր	.	.	.	38
102.	Խողի խորոված	.	.	.	—
103.	Խորոված հնդուհաւ	.	.	.	39
104.	» վառեկ	.	.	.	—
105.	Տապակած վառեկ	.	.	.	—
106.	Տապակած սագ	.	.	.	—
107.	» բագ	.	.	.	40
108.	Վայրի թռչուններ	.	.	.	—
109.	Հիւնքեարպէջնտի	.	.	.	—
110.	Անգիսական տապակած	.	.	.	41
111.	Ռոզբիֆ	.	.	.	—
112.	Հաւի կամ վառեկի սօուս	.	.	.	42
113.	Լուլա քեաբաբ	.	.	.	—
114.	Ոչնարի կամ խողի զառւրմա	.	.	.	—

3. ԱՂՅԱՆՆԵՐ

115.	Թարմ կաղամբի աղցան	.	.	.	43
116.	Սալաթ	.	.	.	—
117.	Թարմ վարունդ	.	.	.	—
118.	Ճակնդեղ	.	.	.	44
119.	Խնձոր	.	.	.	—
120.	Պարզ տեսակ սալատ	.	.	.	—

4. ՓԼԱՒԻՆԵՐ

121.	Քաշովի	.	.	.	—
122.	Քամովի փլաւ	.	.	.	45
123.	Զուով փլաւ	.	.	.	—
124.	Գառան մսով կամ վառեկով փլաւ	.	.	.	46

125.	Փլաւի վերայ գործածուող բաղցրե-	46
	ղէններ	
126.	Ղարլու-փլաւ	—
127.	Կաթնէ սպաս	47
128.	Շիլափլաւ	—
129.	Հարիսա	48

5. ԶԿՆԵՂԻՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

130.	Գեղարքունի, իշխան	—
131.	Նոր ձուկը	49
132.	Լոբո	—
133.	Զութիսի	—
134.	Խորոված օրագուլ	50
135.	Թարթ	—
136.	Նոր ձուկը տապակած	—
137.	Եփած թառափ	—
138.	Եփած դոշ	51

6. ԸՆԴԵՂԻՆ ԵՒ ԱՐՄՏԵՂԻՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ
Ո Ւ Տ Ի Ս Ի Ս Ո Ւ Ա Յ

139.	Գետնախնձորի կատլէտ կաթնէ սոուսով	—
140.	» » սունկի սոուսով	—
141.	Կաթնով գետնախնձոր	52
142.	Կանաչ լոբի եղ ու ձուով	—
143.	» » վառեկով	53
144.	» » բորանի	—
145.	Պորինձանի բորանի	54
146.	Բամիայով միա	—
147.	Բաղրջան-պեօրէք	—

148.	Սերկակիով մսի տոլմա.	.	.	55
149.	Բուշէտ.	.	.	—
150.	Ծնեբէկ եղ ու ձուռով.	.	.	56
151.	Սպանաղ (շոմին)	եղ ու ձուռով.	.	—
152.	Քշմիշով և զերիշկով հաւ.	.	.	57
153.	Վաղի տերեւով տօլմայ.	.	.	—
154.	Կաղամբով տօլմայ.	.	.	—
155.	Սև պորինձանով տօլմայ.	.	.	58
156.	Խնձորի տօլմայ.	.	.	—

Պ Ա Ս Ո Ւ Ա Յ

157.	Տապակած գետնախնձոր.	.	.	59
158.	Գետնախնձոր սոխ ու ձէթով.	.	.	—
159.	Խորոված դգում.	.	.	—
160.	Զէթով փլաւ.	.	.	—
161.	Գետնախնձորով կատլէտ.	.	.	60
162.	Տապակած բոխ.	.	.	—
163.	Սունկով կարկանդակ.	.	.	—
164.	Կանաչ լոբի ընկուզով.	.	.	61
165.	Զիթով պորինձան.	.	.	—
166.	Զիթով լոբի.	.	.	62
167.	Ղանձիլ.	.	.	—
168.	Սվինտրի.	.	.	—
169.	Կշեսպաս.	.	.	—

7. ՍՕՈՒՄՆԵՐ

170.	Պոմադորով սօռւս.	.	.	63
171.	Սալորի սօռւս.	.	.	—
172.	Խնձորի սօռւս.	.	.	—

8. ԱԼԻՒՐԵ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

173.	Մակարօն եղ ու ձուռով.	.	.	64
174.	Էրիշտի և բաղցր կարկանդակների խմոր պատրաստելը.	.	.	—
175.	Ալուբալով կարկանդակ.	.	.	65
176.	Մակարօն թթուասերով.	.	.	—
177.	Քաղցր թելիսմոր (ճաճք).	.	.	—
178.	Բուդինգ - սերով և բուլկով.	.	.	66

Դ • ՄԱՍԼ

ՃԵՅԻ ԵՐՐՈՐԴ ՏԵԽԱԿ ԿԵՐԸԿՈՒՐՆԵՐ

1. ԱԼԻՒՐԵ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

179.	Կարկանդակ տվարողով.	.	.	67
180.	Կաթնով մակարօն.	.	.	—
181.	Բուլբուլշելա.	.	.	68
182.	Ալադիտ.	.	.	—
183.	» խնձորով.	.	.	—
184.	Բիսկվիտ.	.	.	69
185.	Խեղճ ասպետներ.	.	.	—
186.	Բլինչիկ.	.	.	70
187.	» խնձորով.	.	.	—
188.	Ծալծալ կարկանդակ.	.	.	71

2. ՔԱՂՅՐ ԱՐԴԱՆԱԿՆԵՐ ԵԽ ԿՈՄՊՈՏ

189.	Հոր պտուղներից արդանակ կամ կոմ.	.
	պոտ.	72
190.	Թարմ խնձորի և սև սալորի կոմպոտ.	—
191.	Խնձորի, տանձի, նարնջի և սալորի կոմպոտ.	73
192.	Պաղպաղակ.	—
193.	Պլոմբիր.	74
194.	Կրէմ.	75

3. ՔԱՂՅՐ ՊԻՐՈԳՆԵՐ

195.	Պասուայ խմոր.	76
196.	Ուտիսուայ խմոր.	—
197.	Փերուն խմոր թթուասերով.	77
198.	Պիրոգի ընտիր խմոր.	—
199.	Խնձորով կարկանդակ.	78
200.	Սև սալորով կարկանդակ.	—
201.	Քաղցրաւէնիով կարկանդակ.	—

4. ՊՑՈՒՂՆԵՐ

202.	Վայրի և պարտէզի ելակ մոր— կաթով և շաքարով.	—
203.	Խորոված խնձոր շաքարով և կաթով.	—
204.	Զմեռուկ և սեխ.	79

Ե. ՄԱՍԼ

205.	Կուլիչ հիլով.	80
206.	Հասարակ զատկահաց.	81
207.	Ընտիր զատկահաց.	—
208.	Ներկած ձու.	83
Թէթի եխ ՍՈՒՐՃԻ ՊԱՔՄԻՄԱՑՆԵՐ		
209.	Պասուայ բուլկի.	—
210.	Ծալ ծալ քաղցր պիրոգ.	—
211.	Բիսկվիտի պիրոգ լիմոնով.	85
212.	Խնձորի պիրոգ.	86
213.	Նշէ պաքսիմատ.	—
214.	Քաղցր պիրոգ.	87
215.	Զանդկուխն.	88

Զ. ՄԱՍԼ

ՊԱՀԱՐԵՂԵՆ		
216.	Քաղցր կերակուրների համար պահես- տի նիւթեր.	89
217.	Համեղ նիւթեր սօսւսի համար.	—
218.	Համեմեր և խոտեր.	—
219.	Կարմիր պորինձանի պիւրէ.	—
220.	» » չորացրած.	90
221.	Աղ դրած վարունգ.	—
222.	Թթու վարունգ.	—
223.	Մանանեխ.	91

224.	Պաղ. օղի.	91
225.	Սուրճ.	92
226.	Արևածաղկի սուրճ.	—
227.	Գարէ սուրճ.	93
228.	Խողկաղինէ սուրճ.	—
229.	Ալուբալէ խմիչք.	—
230.	Հաղարձի, մորու և ելակի քաղցրաւենի.	94
231.	Խնձորէ պիւրէ.	—
232.	Ալուբալի պիւրէ.	95
233.	Զորցրած մոր.	—
234.	Լիմոնի կՃեպ.	96

Ե. ՄԱՍԱՐ

ՄԻ ՔԸՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ.

235.	Արդանակ եփելու կաթսայ.	97
236.	Զուգունի կաթսան մաքրել.	—
237.	Փայտէ ամանները մաքրել.	—
238.	Պղնձէ ամանները և ինքնաեռը մաքրել.	98
239.	Դանակն սւ պատառաքաղը	»	99
240.	Պողպատից ժանդ հանելու միջոց.	—
241.	Զուից սւեացած գդալները մաքրել.	—
242.	Շիշերը մաքրել.	—
243.	Խոհանոցի հասարակ սեղանները մաքրել.	—
244.	Զանազան իրերը մաքրել.	100
245.	Լուսամտի ապակու և հայելու մաքրելը.	—

9644

226. Արքական պատճեն
227. Առաջնական պատճեն
228. Տըլություն պատճեն
229. Վարչական պատճեն
230. Հայոցին պատճեն և հայոց պատճեններ
231. Խաղաք պատճեն
232. Վարչական պատճեն
233. Հայոցին պատճեն
234. Վարչական պատճեն

Հ - Խ ՀԱՅ

ՀԻ ՀՅՈՒ ՏԻՏՈՒՆ ՏԱՐԱՐԱ

235. Վարչական պատճեն
236. Հայոցին պատճեն
237. Վարչական պատճեն
238. Վարչական պատճեն
239. Վարչական պատճեն
240. Վարչական պատճեն
241. Վարչական պատճեն
242. Վարչական պատճեն
243. Վարչական պատճեն
244. Վարչական պատճեն
245. Վարչական պատճեն

2013

<<Ազգային գրադարան



NL0082433

